

ՀՀ ԳԱԱ «ՀԱՅԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԳԱԿ ՊՈԱԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ ՅՈՒՐԻԻ

ԲՐՈՍ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՆՈՐ ՔԻՐԱԼԱՅԻՆ ՕԺԱՆԴԱԿ ՌԵԱԳԵՆՏՆԵՐԻ ԵՎ
ԴՐԱՆՑ ԱՄԻՆԱԹԹՎԱՅԻՆ ԿՈՄՊԼԵՔՍՆԵՐԻ ՍԻՆԹԵԶՆ ՈՒ
ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ α -ԱՄԻՆԱԹԹՈՒՆԵՐԻ ԱՍԻՄԵՏՐԻԿ
ՍԻՆԹԵԶԻ ՌԵԱԿՑԻԱՆԵՐՈՒՄ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Բ.00.10 - «Կենսօրգանական քիմիա» մասնագիտությամբ
քիմիական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝
քիմ. գիտ. թեկ., դոցենտ
Ս. Ա. Դադայան

ԵՐԵՎԱՆ-2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	4
ԳԼՈՒԽ 1. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ	8
1.1. Ոչ սպիտակուցային α -ամինաթթուների կիրառման բնագավառները	8
1.2. Ամինաթթուների բնական սինթեզի մեխանիզմի օրինաչափությունները ՊՖ ֆերմենտների մասնակցությամբ	11
1.2.1. Ֆերմենտների մոդելային համակարգեր մետաղակոմպլեքսների հիման վրա.....	15
1.2.2. Մետաղակոմպլեքսային կատալիզատորների կիրառությունը α -ամինա- թթուների ասիմետրիկ կենսամիմետիկ սինթեզի ռեակցիաներում.....	16
1.2.3. Մետաղակոմպլեքսների կիրառությունը որպես պիրիդոքսալային ֆերմենտների մոդելներ α -ամինաթթուների ստեխիոմետրիկ ասիմետրիկ սինթեզի ռեակցիաներում	22
1.3. Քիրալային մաքուր ազլիկոններ և դեղանյութեր դրանց հիման վրա.....	30
1.3.1. Քիրալային իզոմերների և դեղաբանական ակտիվության կապը.....	34
1.3.2. Քիրալային նյութեր պարունակող որոշ հայտնի դեղեր	35
1.4. Քիրալային β -պաշարիչներ	39
1.5. α -ամինաթթուների ստեխիոմետրիկ ասիմետրիկ սինթեզի առավել հայտնի օրինակներ	40
ԳԼՈՒԽ 2. ԽՆԴԴ ԴՐՎԱԾՔՆ ՈՒ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ	44
ԳԼՈՒԽ 3. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ	47
3.1. Բրոմ պարունակող մոդիֆիկացված քիրալային օժանդակ ռեագենտների և դրանց ամինաթթվային կոմպլեքսների սինթեզն ու կառուցվածքային հետազոտությունները	47
3.2. Բրոմ պարունակող մոդիֆիկացված կոմպլեքսների հետազոտումը C-ալկիլման ռեակցիաներում	54
3.3. Բրոմ պարունակող մոդիֆիկացված կոմպլեքսների հետազոտումը β -բենզոիլֆենիլ տեղակալիչ պարունակող α -ամինապրոպիոնաթթվի նոր ածանցյալների սինթեզի ռեակցիաներում	61
3.4. Պիպերազինային և ֆուրիլային հետերոցիկլեր պարունակող նոր α -ամինա-	

թթուների սինթեզ Ni^{II} -(S)-2-BrBPB-Gly կոմպլեքսի կիրառմամբ.....	67
3.5. (R)- α -ամինաթթուների ասիմետրիկ սինթեզ.....	68
ԳԼՈՒԽ 4. ՓՈՐՁՆԱԿԱՆ ՄԱՍ	71
4.1. Սարքավորումները.....	71
4.2. Օգտագործված նյութեր և ռեակտիվներ	71
4.3. Մոդիֆիկացված քիրալային օժանդակ ռեագենտների սինթեզը	72
4.3.1. Բրոմ պարունակող (S)-N-բենզիլպրոլինների սինթեզը	72
4.3.2. Բրոմ պարունակող քիրալային օժանդակ ռեագենտների սինթեզը.....	73
4.4. Ni^{2+} իոնի հետ ամինաթթուների և բրոմպարունակող մոդիֆիկացված քիրալային օժանդակ ռեագենտների Շիֆի հիմքերի կոմպլեքսների սինթեզը	74
4.4.1. Ռենտգենկառուցվածքային հետազոտություններ	76
4.5. Ալկիլ հալոգենիդներով գլիցինի և ալանինի Br-պարունակող մոդիֆիկացված կոմպլեքսների ալկիլման ընդհանուր մեթոդը	77
4.5.1. Նպատակային ամինաթթուների անջատումն ու ելային քիրալային օժանդակ ռեագենտների վերականգնումը.....	87
4.5.2. β -բենզոիլ- և բենզոիլֆենիլ տեղակալված α -ամինապրոպիոնաթթվի նոր ածանցյալների սինթեզի ընդհանուր մեթոդիկան Br-պարունակող գլիցինի և ալանինի մոդիֆիկացված կոմպլեքսների կիրառմամբ.....	88
4.5.3. Պիպերազինային և ֆուրիլային հետերոցիկլեր պարունակող նոր α - ամինաթթուների սինթեզ Ni^{II} -(S)-2-BrBPB-Gly կոմպլեքսի կիրառմամբ	92
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	96
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	98
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....	112
ՀԱՎԵԼՎԱԾ 1.....	113
ՀԱՎԵԼՎԱԾ 2.....	120

ՆԱԽԱԲԱՆ

Խնդրի արդիականությունը: Վերջին տասնամյակների ընթացքում քիրալային տեխնոլոգիաների բուռն զարգացումը նոր հորիզոններ է բացում դեղագործական արդյունաբերության մեջ¹: Ուստի պատահական չէ, որ քիրալային տեխնոլոգիաներ մշակող ֆիրմաների ջանքերն առաջին հերթին ուղղված են օպտիկապես ակտիվ քիրալային միացությունների առանձին էնանտիոմերների մոտ հավաստի բուժական էֆեկտների բացահայտմանն ու հաստատմանը և դրանց հիման վրա նոր անվնաս և արդյունավետ դեղապրեպարատների ստացմանը^{2,3}: Դրանք լուրջ ռեսուրս կարող են հանդիսանալ քիրասելեկտիվային պրեպարատների առաջ մղմանը բժշկական թերապիայում: Օրինակ, բժշկական պրակտիկայում լայնորեն կիրառվող հայտնի ցավազրկող “Deksalgine” պրեպարատը, որպես ակտիվ ազլիկոն պարունակում է (S)- α -մեթիլ- β -բենզոիլֆենիլպրոպիոնաթթու: Այն առավել ինտենսիվ է իջեցնում ցավը, քան մինչ այդ օգտագործվող “Ketonal” պրեպարատը, թույլ է տալիս խուսափել անցանկալի մետաբոլիկ պրոցեսներից, նպաստում է պրեպարատի թունավորության նվազեցմանը²⁻⁵:

Սկզբունքային նշանակություն են ձեռք բերել բժշկության, դեղագործության և այլ բնագավառներում լայնորեն կիրառվող α - և β -տեղակալված α -ամինաթթուները: Հեռանկարային են համարվում β -բենզոիլֆենիլ տեղակալված α -ամինապրոպիոնաթթվի էնանտիոմերապես հարուստ ($ee > 95\%$) ածանցյալները, որոնք կարող են առավել ակտիվ ազլիկոն հանդիսանալ ինչպես հայտնի, այնպես էլ նոր ստեղծվելիք ցավազրկող պրեպարատների համար²⁻⁴:

Եվ պատահական չէ, որ էնանտիոմերապես մաքուր α -ամինաթթուների ստացման ասիմետրիկ սինթեզի մեթոդների հանդեպ աճող հետաքրքրությունն աշխարհում կապված է նաև դրանց կիրառական նշանակության հետ, որպես ժամանակակից հակաուռուցքային, ցավազրկող, ակոհոլային և թմրամոլության դեմ կիրառվող դեղապատրաստուկների բաղադրիչներ⁶⁻⁹:

Դրանց կիրառման կարևորագույն ոլորտներից է նաև Պոզիտրոնային էմիսիոնային տոմոգրաֆիան (ՊԷՏ), որի գործընթացներում իզոտոպներով (^{11}C , ^{18}F և այլն) նիշակրված էնանտիոմերապես ակտիվ ոչ սպիտակուցային α -ամինաթթուները, որպես ռադիո-

Ֆարմաքեպարատներ, հաջողությամբ կիրառվում են մի շարք հիվանդությունների (ուռուցքային, սրտաբանական և այլն) արդյունավետ ախտորոշման համար¹⁰⁻¹¹:

Նշված բոլոր բնագավառներում α -ամինաթթուները կիրառելի են միայն օպտիկապես մաքուր էնանտիոմերների տեսքով, քանի որ հակառակ անտիպոդը սովորաբար թողնում է հակառակ ազդեցություն, իսկ ՊԷՏ ախտորոշման դեպքում՝ խանգարում է արդյունավետ ախտորոշմանը: Այդպիսի միացությունների ստացման մեթոդների համար առանցքային են համարվում սինթեզի բարձրսելեկտիվությունն ու տևողությունը:

Հետևաբար, առավել բարձր էնանտիոսելեկտիվությամբ և ամինաթթվային մնացորդների բարձր ռեակցիոնունակությամբ օժտված նոր մոդիֆիկացված ամինաթթվային կոմպլեքսների սինթեզն ու դրանց կիրառմամբ օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուների, մասնավորապես β -բենզոիլֆենիլ տեղակալված α -ամինապրոպիոնաթթվի նոր և էնանտիոմերապես հարուստ ($ee > 95\%$) ամինաթթուների բարձրսելեկտիվ մեթոդների մշակումը մնում է արդիական խնդիր:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Սույն ատենախոսության նպատակն է.

1. Բրոմ պարունակող քիրալային նոր օժանդակ ռեագենտների և ամինաթթվային կոմպլեքսների ստացումն ու դրանց հետազոտումը օպտիկապես ակտիվ (*S*)- և (*R*)- α -ամինաթթուների ասիմետրիկ սինթեզի ռեակցիաներում:

2. Բրոմ պարունակող մոդիֆիկացված ամինաթթվային կոմպլեքսների հետազոտումը β -դիրքում բենզոիլֆենիլ և հետերոցիկլիկ տեղակալիչ խմբերով ակլիլ հալոգենիդների հետ՝ պոտենցյալ ցավազրկող հատկությամբ օժտված օպտիկապես ակտիվ α -ամինապրոպիոնաթթվի նոր ածանցյալների բարձրսելեկտիվ ($ee > 95\%$) մեթոդների մշակման համար:

Դրված նպատակին հասնելու համար նախատեսվել է.

- Սինթեզել (*S*)-2-N-(N'-բենզիլպրոլիլ)ամինաբենզոֆենոն [(*S*)-BPB] քիրալային օժանդակ ռեագենտի N-բենզիլպրոլիլի մնացորդի ֆենիլային օղակի *o*-, *m*- և *p*- դիրքերում բրոմ տեղակալիչի պարունակությամբ մոդիֆիկացված նմանակներ՝ (*S*)- և (*R*)-N-(2-բենզոիլֆենիլ)-1-(2-բրոմբենզիլ)պիրոլիդին-2-կարբօքսամիդ (2-BrBPB), (*S*)- և (*R*)-N-(2-բենզոիլֆենիլ)-1-(3-բրոմբենզիլ)պիրոլիդին-2-կարբօքսամիդ (3-BrBPB), (*S*)- և (*R*)-N-(2-

բենզոիլֆենիլ)-1-(4-բրոմբենզիլ)պիրոլիդին-2-կարբոքսամիդ (4-BrBPB):

- Սինթեզել բրոմ պարունակող քիրալային օժանդակ ռեագենտների և ամինաթթուների (Gly, Ala) Շիֆի հիմքերի հետ Ni^{II} իոնի առաջացրած հարթ քառակուսային մոդիֆիկացված կոմպլեքսներ՝ Ni^{II} –(S)-2-BrBPB-Gly, Ni^{II} –(R)-2-BrBPB-Gly, Ni^{II} –(S)-3-BrBPB-Gly, Ni^{II} –(R)-3-BrBPB-Gly, Ni^{II} –(S)-4-BrBPB-Gly, Ni^{II} –(R)-4-BrBPB-Gly, Ni^{II} –(S)-2-BrBPB-(S)-Ala, Ni^{II}–(R)-2-BrBPB-(R)-Ala, Ni^{II}–(S)-3-BrBPB-(S)-Ala, Ni^{II}–(R)-3-BrBPB-(R)-Ala, Ni^{II}–(S)-4-BrBPB-(S)-Ala, Ni^{II}–(R)-4-BrBPB-(R)-Ala:
- Գլիցինի և ալանինի մոդիֆիկացված կոմպլեքսները հետազոտել ալկիլհալոգենիդների հետ դրանց ամինաթթվային մնացորդների C-ալկիլման ասիմետրիկ ռեակցիաներում և մշակել (S)- և (R)-բացարձակ կառուցվածքի α -ամինաթթուների և դրանց α -մեթիլ տեղակալված նմանակների բարձրսելեկտիվ սինթեզի մեթոդներ:
- Գլիցինի և ալանինի մոդիֆիկացված ամինաթթվային կոմպլեքսները հետազոտել արոիլֆենիլ տեղակալիչ պարունակող ալկիլ հալոգենիդների հետ C-ալկիլման ռեակցիաներում, β -դիրքում օպտիկապես ակտիվ α -ամինապրոպիոնաթթվի նոր ածանցյալների բարձրսելեկտիվ ($ee > 95\%$) մեթոդների մշակման համար, որոնք որպես պոտենցյալ ցավազրկող հատկությամբ օժտված ոչ ստերեոիդային ազդիկոններ կարող են կիրառվել բժշկական թերապիայում:
- Գլիցինի մոդիֆիկացված կոմպլեքսները հետազոտել հետերոցիկլիկ խմբեր պարունակող ալկիլ հալոգենիդների հետ C-ալկիլման ռեակցիաներում և մշակել (S)- և (R)-բացարձակ կառուցվածքի, օպտիկապես ակտիվ α -ամինապրոպիոնաթթվի նոր ածանցյալների բարձրսելեկտիվ ($ee > 95\%$) մեթոդների մշակման համար:

Գիտական նորույթը: Առաջին անգամ սինթեզվել են բրոմ պարունակող նոր (S)-2-BrBPB, (S)-3-BrBPB, (S)-4-BrBPB մոդիֆիկացված քիրալային օժանդակ ռեագենտներ, դրանց և ամինաթթուների (Gly, Ala) Շիֆի հիմքերի հետ Ni^{II} իոնի առաջացրած հարթ քառակուսային կոմպլեքսներ: Վերջիններս, որպես պիրիդոքսալային ֆերմենտների պարզ մոդելային համակարգեր, հետազոտվել են α -ամինաթթուների ասիմետրիկ սինթեզի ռեակցիաներում: Արդյունքում, (S)-2-BrBPB քիրալային օժանդակ ռեագենտի ամինաթթվային կոմպլեքսների կիրառմամբ ցույց է տրվել (S)- և (R)-բացարձակ կառուցվածքի α -ամինաթթուների (այդ թվում α -տեղակալված α -ամինաթթուների) բարձրսելեկտիվ ($ee > 94-95\%$) ասիմետրիկ սինթեզի հնարավորությունը: Առաջին

անգամ մշակվել են ոչ ստերեոիդային կառուցվածքի պոտենցյալ ցավազրկող հասկությամբ օժտված, β -դիրքում բենզոհիֆենիլ-, բենզոհիլ-, պիպերազինային ու ֆուրիլային հետերոցիկլեր պարունակող α -ամինապրոպիոնաթթվի սինթեզի ունիվերսալ մեթոդներ:

Աշխատանքի կիրառական նշանակությունը: α -ամինաթթուների և մասնավորապես, β -դիրքում բենզոհիֆենիլ տեղակալիչ պարունակող α -ամինապրոպիոնաթթվի նոր ածանցյալների սինթեզի մշակված ունիվերսալ մեթոդը, տեխնոլոգիապես մատչելի է լայն սպեկտրի օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային (*S*)- և (*R*)-ամինաթթուների պրեպարատիվ արտադրության համար: Այն հնարավորություն է տալիս միննույն տեխնոլոգիական սխեմայով, նույն ելային քիրալային օժանդակ ռեագենտի և բնական հումքի կիրառմամբ սինթեզել զանազան (*S*)- և (*R*)-բացարձակ կառուցվածքով էնանտիոմերապես հարուստ ($ee > 95\%$) α - և β -տեղակալված ամինաթթուներ:

Իսկ առաջին անգամ սինթեզված, β -դիրքում բենզոհիֆենիլ տեղակալիչ պարունակող էնանտիոմերապես հարուստ ($ee > 95\%$) α -ամինապրոպիոնաթթվի նոր ածանցյալների *in vitro* փորձարկումները հույս են ներշնչում, որ դրանք մոտ ապագայում կարող են կիրառություն գտնել բժշկական թերապիայում, որպես պոտենցյալ ոչ ստերեոիդային ակտիվ ազլիկոններ, անալգետիկ պրեպարատների բաղադրության մեջ:

ԳԼՈՒԽ 1. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

1.1. Ոչ սպիտակուցային α -ամինաթթուների կիրառման բնագավառները

Բժշկության, սննդարդյունաբերության, մանրէաբանության և գիտության ու տեխնիկայի այլ բնագավառներում α -ամինաթթուների հանդեպ աճող պահանջարկը զգալիորեն ընդլայնել է դրանց կիրառման ոլորտները^{12,13}: Առանձնակի ուշադրության են արժանանում ոչ սպիտակուցային α -ամինաթթուները, որոնք հաջողությամբ կիրառվում են բժշկական թերապիայում, որպես հակաքաղցկեղային, ցավազրկող, հիպերտենզիվային և այլ դեղապատրաստուկների ակտիվ ազլիկոններ^{6,14,15}:

Հայտնի է, օրինակ, որ պեպտիդային բնույթի դեղապատրաստուկների կառուցվածքում ոչ սպիտակուցային ծագման ամինաթթվի ներմուծումը բերում է պրոտոլիտիկ ֆերմենտների հանդեպ դրանց կայունացման մեծացմանը և ազդեցության պրոլոնգացմանը^{16,17}: Այդ հատկությունն էլ առաջին հերթին հնարավորություն է ընձեռում օպտիկապես մաքուր այդպիսի քիրալային միացությունների կիրառումը հակաքաղցկեղային, ցավազրկող, հիպերտենզիվ և այլ ազդեցության դեղապատրաստուկների ստացման ժամանակ^{18,19}:

Գրական ակնարկի բնագավառին նվիրված առավել հայտնի աշխատանքների վերլուծությունը ցույց տվեց, որ քիրալայնորեն մաքուր բաղադրամասերի, այդ թվում և օպտիկապես մաքուր ոչ սպիտակուցային ամինաթթուների համար, սինթեզի ավանդական մանրէաբանական, էնզիմատիկ և քիմիական մեթոդները պիտանի չեն այդ միացությունների ոչ բնական կառուցվածքի և ռացեմատների առաջացման (քիմիական սինթեզի դեպքում) պատճառով: Այդպիսի միացությունների ստացման համար առավել արդիական են համարվում կենսատեխնոլոգիական և ասիմետրիկ սինթեզի ուղղությունները: Քիրալայնորեն մաքուր ամինաթթուների սինթեզի այս կամ այն ուղղության ընտրությունը կախված է նպատակային արգասիքի օպտիկական մաքրության աստիճանից և դրա կիրառման բնագավառից:

Սինթեզի սինթետիկ մեթոդները ունիվերսալ և արդյունավետ են, եթե դրանց անհրաժեշտ ելանյութերը մատչելի են, իսկ օգտագործվող սարքավորումներն ու ռեակցիայի պայմանները՝ ընդհանուր մի շարք ամինաթթուների համար: Սակայն այդպիսի դեպքերը հազվադեպ են, քանի որ որոշիչ է նաև կողքային ռադիկալի դերը:

Մինթեզի ավանդական քիմիական մեթոդներին բնորոշ է նաև վերջնական քիրալային միացությունների առաջացումը օպտիկապես ոչ ակտիվ ռացեմատ խառնուրդների տեսքով, որոնց բաժանումը առանձին անտիպոդների էնզիմատիկ կամ մանրէաբանական մեթոդներով արդյունավետ է միայն սպիտակուցային α -ամինաթթուների դեպքում: Իսկ ոչ սպիտակուցային α -ամինաթթուների դեպքում վերը նշված մեթոդները պիտանի չեն սուբստրատների ոչ բնական կառուցվածքի պատճառով: Վերջիններս, չունենալով սեփական *ψ-ՌՆԹ*, չեն հայտնվում սպիտակուցների պոլիպեպտիդային շղթաներում՝ օրգանիզմում տեղի ունեցող մետաբոլիկ փոխարկումների ժամանակ: Վերջին տասնամյակների ընթացքում, որպես ֆերմենտների անդարձելի ինհիբիտորներ ոչ սպիտակուցային α -ամինաթթուները հաջողությամբ կիրառվում են բժշկության, դեղագործության, քիմիայի և գիտության ու տեխնիկայի այլ բնագավառներում: Դրա մասին են վկայում ոչ սպիտակուցային α -ամինաթթուների պահանջարկի տարեցտարի աճը (մոտ. 15%) միջազգային շուկայում: Եվ պատահական չէ, որ հետազոտողների և հատկապես քիրալային տեխնոլոգիաներ մշակողների ուշադրությունը վերջին շրջանում կենտրոնացված է կենսաբանական ակտիվությամբ օժտված ոչ սպիտակուցային α -ամինաթթուների վրա^{20,21}:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հատկապես մեծ է ոչ սպիտակուցային α -ամինաթթուների դերը ժամանակակից հակաքաղցկեղային, հիպերտենզիվային, ցավազրկող, ակոհոլային և թմրամոլության կախվածության դեմ դեղապրեպարատների բաղադրության մեջ^{22,23}: Առանձնահատուկ նշանակություն ունեն α -մեթիլ տեղակալված α -ամինաթթուները, որոնք կովալենտ կապվելով որոշ ֆերմենտների ակտիվ կենտրոնի հետ՝ անդարձելիորեն արգելակում են դրանց ակտիվությունը: Այդ երևույթն օգտագործվում է էնզիմալոգիայում և կենսաքիմիայում՝ որոշ ֆերմենտների ազդեցության մեխանիզմների պարզաբանման ժամանակ^{24,25}:

Օրինակ, α -մեթիլ-L-դոփսիֆենիլալանինը (DOPA) դեղապրեպարատի բաղադրության մեջ մտցնելու դեպքում բացառվում են անցանկալի երևույթները Պարկինսոնի հիվանդության բուժման ժամանակ²⁶⁻²⁹, α -մեթիլտրիպտոֆանն օգտագործվում է ստաֆիլոկոկային ինֆեկցիայի բուժման ժամանակ³⁰, α -մեթիլթիրոզինը ինհիբացում է թիրոզինհիդրօքսիլազ ֆերմենտի ազդեցությունը, փոխարկվելով ադրենալինի բիոսին-

թեզի միջանկյալ արգասիք հանդիսացող 3,4- դիօքսիֆենիլալանինի³¹:

Ոչ սպիտակուցային α -ամինաթթուները հաջողությամբ կիրառվում են նաև զանազան դեղապատրաստուկների սինթեզի գործընթացներում՝ որպես դրանց կարևոր բաղադրիչներ: Այսպես, հակաուռուցքային ակտիվությամբ օժտված ուժեղ հակաբիոտիկ *Leucinestatin-A*-ն պարունակում է (*S*)- α -մեթիլամինապրոպիոնաթթվի երեք մնացորդներ³², Օ-մեթիլ L-թիրոզինը կիրառվում է 3-Օ-մեթիլթրեոնինօքսիտոցինի³³ սինթեզի համար, β -N-տեղակալված ամինաթթուների ածանցյալները մտնում են *Tuberactinomycin*³⁴, *Bleomicin*³⁵, *Edenin*³⁶, *Kapreomicin*³⁷ և A-1903³⁸ հակաբիոտիկների բաղադրության մեջ և այլն: S-տեղակալված ցիստեինները կիրառվում են ցիստեին պարունակող ֆիզիոլոգիապես ակտիվ պեպտիդների սինթեզի դեպքում³⁹, D-*allo*-իզոլեյցինի ներմուծումը *Dactinomycin-D* դեղապատրաստուկի բաղադրության մեջ մեծացնում է նրա հակաուռուցքային ակտիվությունը⁴⁰, սիմպատոմիմետիկ N-կարբօքսիֆենիլպիրոլիզինը հանդիսանում է *Lysinopriole*⁴¹ դեղապատրաստուկի բաղադրիչ մասը, L-լիզինի, L-օքսիպրոլինի և D-ֆենիլալանինի ածանցյալները մտնում են հակաքաղցկեղային *Leuprolide*⁴², *Octreolide*⁴³, և *Tuftusine*⁴⁴ պրեպարատների բաղադրության մեջ և այլն:

Հայտնի է նաև, որ դեղապատրաստուկների բաղադրության մեջ սպիտակուցային ամինաթթուների փոխարեն դրանց ոչ սպիտակուցային նմանակների ներմուծումը մեծացնում է դեղերի կայունությունը պեպտիդային կապը ճեղքող ֆերմենտների հանդեպ, որն էլ իր հերթին բերում է դեղերի ազդեցության պրոլոնգացմանը⁴⁵: Դեղագործության մեջ կիրառվող ոչ սպիտակուցային α -ամինաթթուների շարքին են դասվում նաև β -հալոգենալանինը⁴⁶, ցիկլոսերինը⁴⁷, վինիլգլիցինը⁴⁸ և այլն:

Սկսած անցած դարի 50-ական թվականներից առանձնակի ուշադրության են արժանացել իզոտոպով նիշակրված α -ամինաթթուները, որոնք հաջողությամբ կիրառվում են օրգանիզմում ընթացող մետաբոլիզմի տարբեր պրոցեսների կարգավորման և մոլեկուլյար գենետիկական մեխանիզմների ուսումնասիրման աշխատանքներում⁴⁹:

Էնանտիոմերային և օպտիկական գերբարձր ($ee > 95\%$) մաքրություն ունեցող իզոտոպով նիշակրված α -ամինաթթուներն հաջողությամբ կիրառվում են բժշկական ՊԷՏ ախտորոշման բնագավառում, որպես պոզիտրոնային ռադիոֆարմապրեպարատներ⁵⁰⁻⁵²:

ՊԷՏ-ը բժշկական ռադիոիզոտոպային ախտորոշման ժամանակակից մեթոդ է,

հիմնված ատոմների իզոտոպով նիշակրված պոզիտրոնային ճառագայթիչներ պարունակող դեղապրեպարատների կիրառման վրա: Սովորաբար այդպիսի դեղապատրաստուկները ստանում են անմիջապես հետազոտության վայրում՝ պայմանավորված իզոտոպների կյանքի կարճատևությամբ: Ընդ որում, պետք է փաստել, որ ռադիոֆարմապրեպարատի ընտրությունը կախված է հետազոտվող օրգանի ֆունկցիաներից, որոնց մետաբոլիկ պաթոլոգիական փոփոխություններին էլ պետք է հետևել: Այսպես, բջիջների աշխատանքի ինտենսիվության որոշման համար առավել նպատակահարմար է իզոտոպով նիշակրված գլյուկոզայի նմանակի՝ ^{18}F -դեզօքսիգլյուկոզայի կիրառումը, իսկ դրանց աճի և բազմացման պրոսեցների ուսումնասիրման, ասենք ուռուցքների հայտնաբերման համար՝ ^{11}C և ^{18}F իզոտոպներ պարունակող ամինաթթուները:

Անհրաժեշտ է նշել, որ ինչպես ՊԷՏ ախտորոշման, այնպես էլ բժշկական թերապիայի, դեղագործության այլ բնագավառներում կիրառվող ամինաթթուները պետք է լինեն օպտիկապես մաքուր միայն մեկ ստերեոիզոմների տեսքով, քանի որ դեղաբանորեն ակտիվ ամինաթթվի անտիպոդը հաճախ թողնում է բացասական ազդեցություն: Այսպես, (*R*)-թալիդոմիդը հայտնի ցավազրկող է, իսկ նրա (*S*)-էնանտիոմերը ցուցաբերում է տերատոգենություն⁵³: Կամ, *Robbitussin* պրեպարատի ակտիվ ազիլկոն *dextrometorphan*-ն ունի մուկոլիտիկ հատկություն, իսկ դրա անտիպոդ *levomethorphan*-ն՝ ուժեղ թմրանյութ է⁵⁴:

Ուստի բարձր էնանտիոմերային մաքրությամբ ($ee > 95\%$) ոչ սպիտակուցային α -ամինաթթուների սինթեզի բարձրսելեկտիվ և համեմատաբար արագընթաց մեթոդների և դրանց հիման վրա նոր ամինաթթուների ստացման եղանակների մշակումը մնում է կենսօրգանական քիմիայի կարևորագույն խնդիրներից⁵⁵⁻⁶⁰, որը խիստ պահանջված է քիրալային տեխնոլոգիաներ մշակող դեղարտադրողների կողմից: Այդպիսի նպատակային սինթեզի և դրանց հիման վրա նոր քիրալային տեխնոլոգիաների մշակման համար այսօր չգերազանցված են մնում α -ամինաթթուների ասիմետրիկ սինթեզի հնարավորությունները, մասնավորապես, բիոմիմետիկ ասիմետրիկ սինթեզը:

1.2. Ամինաթթուների բնական սինթեզի մեխանիզմի օրինաչափությունները

ՊՖ ֆերմենտների մասնակցությամբ

Անառարկելի է, որ առ այսօր կենսամիմետիկ համակարգերով էնանտիոմերապես

մաքուր α -ամինաթթուների սինթեզի իրականացումը, ինչպես դա արվում է օրգանիզմներում կենսակատալիզատորների կողմից, մնում է չհաղթահարված⁶¹:

Հայտնի է, որ օրգանիզմներում ամինաթթուների սինթեզի ռեակցիաները կատալիզվում են ակտիվ կենտրոնում պիրիդօքսալֆոսֆատ (ՊՖ) խումբ պարունակող ֆերմենտները, որոնք նաև ամինաթթուների մետաբոլիզմի հիմնական պատասխանատուներն են օրգանիզմում: Դրանց ազդեցության մեխանիզմը կայանում է ֆերմենտի ակտիվ կենտրոնում պիրիդօքսալ ալդեհիդի և ամինաթթվի միջև Շիֆի հիմքի առաջացումը, ինչի արդյունքում ամինաթթուն վեր է ածվում ակտիվ CH թթվի՝ հեշտությամբ տալով իր α -պրոտոնը⁶²: Առաջացած կարբանիոնը բազմաթիվ փոխարկումների արդյունքում փոխազդելով ասենք էլեկրոֆիլների հետ, ինիցում է C-C կապի առաջացում, կամ ենթարկվում է դեյտերացման: Կապված ֆերմենտի սպեցիֆիկությունից, բնության մեջ դրանք կարող են նաև առաջացնել ամինաթթվի մոլեկուլում այս կամ այն կապի խզում կամ տեղակալում, կախված վերջիններիս բնույթից: Այդ ռեակցիաների թվին են դասվում ամինաթթվի α -H-ի պոկման և առաջացած կարբանիոնի C-ալկիլման, β -օքսի α -ամինաթթուների α, β -էլիմինացման և առաջացող դեհիդրոամինաթթուների C=C կրկնակի կապին նուկլեոֆիլների միացման ռեակցիաները և այլն:

Արձանագրված բազմաթիվ փաստերի հիման վրա աշխարհահռչակ գիտնականներ Բրաունշտեյնի, Շեմյակինի⁶³ (ԽՍՀՄ-ից) և Մետցլերի և Սնելի⁶⁴ (ԱՄՆ) կողմից, անցած դարի 50-ական թվականներին միաժամանակ բացահայտվեց պիրիդօքսալային կատալիզի տեսությունը, որի համար նրանք արժանացան Նոբելյան մրցանակի: Համաձայն այդ տեսության, օրգանիզմում ամինաթթուների սինթեզի առանցքային փուլը ֆերմենտի ակտիվ կենտրոնում գտնվող ամինաթթվի և պիրիդօքսալ ալդեհիդի միջև Շիֆի հիմքի առաջացումն է: Ապացուցվել է, որ ֆերմենտի ակտիվ կենտրոնում ՊՖ-ն ամրանում է կովալենտ, իոնական կամ հիդրոֆոր փոխազդեցությունների, ինչպես նաև կոֆերմենտի և ապոֆերմենտի ֆունկցիոնալ խմբերի միջև առաջացած ջրածնական կապերի շնորհիվ⁶⁵: Իոնական փոխազդեցություններ են դիտվել ՊՖ-ի իոնիզացված ֆոսֆատային և հիդրօքսի խմբերի միջև⁶⁶: Այսպիսով, համաձայն պիրիդօքսալային տեսության հեղինակների, ֆերմենտի կարևոր ֆունկցիաներից մեկը նրա ակտիվ կենտրոնում ամինաթթվի և ՊՖ-ի միջև Շիֆի հիմքի առաջացումն է:

Ենթադրվում է, որ ֆերմենտ-սուբստրատային կոմպլեքսում գտնվող ամինաթթվի մնացորդը փոխարկվում է CH-թթվի, իսկ α -պրոտոնի պոկումն ու առաջացած կարբանիոնի կայունացումն ընթանում է ֆերմենտի ակտիվ կենտրոնի ֆունկցիոնալ խմբերի հաշվին: Ըստ էության, ֆերմենտի կողմից կատալիզվող ամինաթթվային մնացորդի α -պրոտոնի պոկումը դառնում է էլիմինացման պրոցեսի որոշիչ փուլը, իսկ ակտիվ կենտրոնում հիմնային կատալիզի դեր կարող են կատարել, օրինակ հիստիդինի⁶⁷ իմիդազոլային կամ լիզինի ω -ամինային խմբերը⁶⁴:

Ակնհայտ է դառնում, որ ֆերմենտ սպիտակուցային շղթայի դերը այնպիսի միկրո-հետերոգեն համակարգի ստեղծումն է, որը պարունակի կովալենտ, հիդրոֆոբ և իոնական կապերով ակտիվ կենտրոնում ֆիքսված ՊՖ խումբ: Բացի դրանից ապոֆերմենտը ստեղծում է նաև յուրահատուկ քիրալային շրջափակում ՊՖ-ի հետ կապված ամինաթթվային մնացորդի շուրջ՝ ապահովելով ռեակցիայի ստերեոսելեկտիվ ընթացքը:

Ավելի ուշ, Դանաթանը հրապարակել է մի հիպոթեզ, համաձայն որի ֆերմենտը ռեակցիան կատալիզում է միայն մեկ ուղղությամբ, որի ընտրողական բնույթը պայմանավորված է ստերեոէլեկտրոնային գործոններով⁶⁸: Դանաթանը պնդում է, որ ֆերմենտի ակտիվ կենտրոնում ամինաթթվային մնացորդի C_{α} -ի առաջացրած կապերից խզվում է այն կապը, որը տվյալ պահին ուղղահայաց դիրք է գրավում առաջացած Շիֆի հիմքի հարթության նկատմամբ:


ՊՖ-կախյալ ֆերմենտների առանձնահատկություններից է նաև նրանց կողմից կատալիզվող ամինաթթվային փոխարկումների ստերեոքիմիան⁶⁹: Պարզվել է, որ այդ համակարգերը, բացառությամբ ռացեմատների, տարբերում են ինչպես ամինաթթվի էնանտիոմերները, այնպես էլ ամինաթթվային մնացորդների էնանտիոտոպ կողմերը⁷⁰: Այդ ֆերմենտների կողմից կատալիզվող C_{α} - C_{β} և C_{α} -H կապերի խզումն ու առաջացումն ընթանում են էնանտիոսպեցիֆիկ և էնանտիոսելեկտիվ:

β -էլիմինացման ռեակցիաների մեխանիզմն ու ստերեոքիմիան պարզաբանվել են իզոտոպով նիշակրված ատոմների կիրառմամբ, ինչը հնարավորություն է տվել պարզել D-սերինդեհիդրատագա և O-ացետիսերինսուլֆիդրալագա ֆերմենտների ազդեցությամբ ընթացող OH-խմբերի էլիմինացիան և ցիստեինի սինթեզի ստերեոքիմիան:

Վերերասի և Ֆլուսի կողմից իրականացված հետազոտությունները^{71,72} ցույց են տվել,

որ նման համակարգերում β -էլեկտրոակցեպտոր տեղակալիչի հեռացումն ու համապատասխան նուկլեոֆիլի միացումը տեղի է ունենում ֆերմենտի ակտիվ կենտրոնում ֆիքսված ամինաթթվային մնացորդի Շիֆի հիմքի հարթության միայն մի կողմից:

Ուսումնասիրելով ֆերմենտների մասնակցությամբ ընթացող α,β - և β,γ -էլիմինացման և տեղակալման ռեակցիաների ստերեոքիմիական ասպեկտները, կարելի է եզրակացնել, որ ՊՖ-ֆերմենտների Շիֆի հիմքի համակարգում բոլոր կենսաքիմիական ռեակցիաներն ընթանում են Շիֆի հիմքի հարթության մի կողմում^{73,74} (նկար 1):



Նկար 1. ՊՖ-կախյալ ֆերմենտի ակտիվ կենտրոնի Շիֆի հիմքի քիրալային շրջափակումը ապոֆերմենտով

Հետազոտությունները ցույց տվեցին, որ ընդհանուր օրինաչափություններից լինում են նաև բացառություններ, որոնք ամենից առաջ վերաբերվում են ռացեմազներին, որոնց ակտիվ կենտրոնում առկա են երկու հիմնային խմբեր, որոնցից մեկը ամինաթթվից պոկում է պրոտոնը, իսկ մյուսը վերադարձնում է այն հակառակ կողմից⁷⁵:

Ամփոփելով β -էլիմինացնող ֆերմենտների ազդեցության մեխանիզմը կարելի է պնդել, որ β -դիրքում էլեկտրոակցեպտոր խումբ ունեցող ամինաթթուն ակտիվ կենտրոնի պիրիդոքսալ ալդեհիդի հետ առաջացնում է Շիֆի հիմք, որն էլ միջանկյալ կարբանիոնի առաջացմամբ ենթարկվում է էլիմինացման⁷⁶: Ընդ որում պազվել է, որ pH-ի 8-9-ի սահմաններում առաջանում են երեք տիպի Շիֆի հիմքեր, որոնք իրարից տարբերվում են պրոտոնացման աստիճանով: Պարզվել է նաև, որ այդ ձևերից ավելի ռեակցիոնունակ

է մասնակի պրոտոնացված ազոտ պարունակող հետերոցիկլիկ մասնիկները, ամբողջովին դեպրոտոնացվածները ռեակցիոնունակ չեն, իսկ ամբողջովին պրոտոնացվածներն օժտված են միջին ռեակցիոնունակությամբ: Հետևաբար, կարող ենք ասել, որ ՊՖ ֆերմենտների ակտիվ կենտրոնում ամինաթթուների հետ առաջացած Շիֆի հիմքերի ռեակցիոնունակությունը α, β -էլիմինացման ռեակցիաներում կախված է դրանցում ազոտի ատոմի պրոտոնացման աստիճանից և միջանկյալ կարբանիոնի ակտիվությունից:

Արված վերլուծությունից կարող ենք ամրագրել.

1. Շնորհիվ ֆերմենտի ակտիվ կենտրոնի և ամինաթթվի միջև Շիֆի հիմքի առաջացման, ամինաթթվային մնացորդը վեր է ածվում ակտիվ CH-թթվի, իսկ դեհիդրոամինաթթվային մնացորդի C=C կապը ձեռք է բերում բարձր էլեկտրոֆիլություն:

2. Շնորհիվ ներմոլեկուլյար ոչ կովալենտային փոխազդեցությունների, համակարգը ձեռք է բերում բավարար կայունություն՝ ամինաթթվային մնացորդների հետագա փոխարկումներում:

3. Ապոֆերմենտի կողմից ֆերմենտի ակտիվ կենտրոնի քիրալային շրջափակման շնորհիվ համակարգը ձեռք է բերում գերբարձր էնանտիոսելեկտիվություն, որն էլ ապահովում է 100% L-ամինաթթուների ստերեոսելեկտիվ սինթեզ (նկար1):

Հիմք ընդունելով ֆերմենտային համակարգերին բնորոշ վերը բերված երեք անհրաժեշտ սկզբունքները, ամինաթթուների կենսամիմետիկ արդյունավետ սինթեզի իրականացման համար պետք է ստանալ ֆերմենտների արդյունավետ պարզ մոդելային համակարգեր, որոնք կապահովեն ամինաթթվային մնացորդների փոխարկումների բարձր ստերեոսելեկտիվ ընթացք:

Համաձայն առավել հայտնի գրական աշխատանքների, ֆերմենտների պարզ մոդելային համակարգերի դերում հաճախակի օգտագործվում են անցումային շարքի մետաղների ամինաթթվային կոմպլեքսները, որոնցում ապոֆերմենտի ֆունկցիան կատարում են մետաղի իոնները, իսկ լիգանդի դերը պիրիդոքսալ ալդեհիդը կամ էլ նրա որևէ կարբոնիլային նմանակը՝ Շիֆի հիմքի համակարգով կապված ամինաթթուների կամ ամինների հետ:

1.2.1. Ֆերմենտների մոդելային համակարգեր մետաղակոմպլեքսների հիման վրա

Կենսաբանորեն և դեղաբանորեն ակտիվ օպտիկապես մաքուր քիրալային

միացությունների ասիմետրիկ սինթեզը, համաձայն 1.2. ենթագլխում արված վերլուծության, ենթադրում է ունենալ կենսակատալիզատորի համապատասխան հատկությամբ օժտված պարզ մոդելային համակարգեր և դրանց միջոցով նմանակել համապատասխան նպատակային ակտիվ մետաբոլիտի բնական սինթեզի ընթացքը: Ինչպես նախորդիվ արված վերլուծությունը ցույց տվեց, ֆերմենտների լավագույն մոդելների կենսամիմետիկ քիմիայում առավել հայտնի են անցումային շարքի մետաղների կոմպլեքսները: Վերջիններիս կենսամիմետիկ մոդելի արդյունավետությունը պայմանավորված է դրանց կողմից իրականացվող ասիմետրիկ ռեակցիաների ստերեոսելեկտիվության ցուցանիշով: Կախված կենսակատալիզատորի մոդելային համակարգի կառուցվածքից և կենսամիմետիկ ակտիվությունից, ասիմետրիկ կենսամիմետիկ ռեակցիաները ընդունված է բաժանել երկու հիմնական խմբերի: Դրանք են.

1. Կատալիտիկ ասիմետրիկ սինթեզ, որի ընթացքում որպես ֆերմենտային մոդելային համակարգեր կիրառվում են քիրալային կատալիզատորներ;


2. Ստեխիոմետրիկ ասիմետրիկ սինթեզ, երբ որպես ֆերմենտային համակարգի մոդելներ օգտագործվում են վերականգնվող քիրալային օժանդակ ռեագենտների կոմպլեքսներ:

1.2.2. Մետաղակոմպլեքսային կատալիզատորների կիրառությունը

α-ամինաթթուների ասիմետրիկ կենսամիմետիկ սինթեզի ռեակցիաներում

Օպտիկապես և էնանտիոմերապես մաքուր α-ամինաթթուների սինթեզի առավել հայտնի մեթոդների շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում կատալիտիկ ասիմետրիկ C-ակլիլման մեթոդները՝ քիրալային կատալիզատորների օգտագործմամբ: Ասիմետրիկ ակլիլման մեթոդներից առավել հեռանկարային են համարվում վերջին 20-30 տարիներին արձանագրված միջֆազային կատալիզի (ՄՖԿ) հիման վրա ստեղծված մեթոդները: Կան բազմաթիվ աշխատանքներ, որոնց ժամանակ կիրառվել են բնական ակլալիոդների շարքին դասվող՝ ցինխոնիդին, ցինխոնին, խինին, խինիդին, ինդանոն ⁷⁷⁻⁸⁰, բինավթիլային սպիրոբիցիկլիկ ամոնիումային աղերի^{81,82}, տետրաակլիլ տեղակալված բինավթիլի^{83,84} և այլ կատալիզատորների կիրառմամբ իրականացվել են գլիցին, ալանին, ֆենիլալանին ամինաթթուների ասիմետրիկ ակլիլման ռեակցիաներ՝ 45-97% ստերեոսելեկտիվությամբ:

Ասիմետրիկ սինթեզի հայտնի կատալիտիկ մեթոդների շարքում առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում անցումային մետաղների քիրալային կոմպլեքսների հիման վրա մշակված մեթոդները: Համաձայն այդ աշխատանքներում արված եզրակացությունների, կատալիտիկ էնանտիոսելեկտիվ սինթեզի արդյունավետ մեթոդի մշակման համար, անհրաժեշտ է օգտագործել պարզ և ռեակցիոնունակ կատալիզատոր, որը սակայն ընդունակ լինի տարբերելու աքիրալ մոլեկուլների էնանտիոտոպ կողմերը: Ընդ որում, բացի կատալիզատորի կառուցվածքում կենտրոնական մետաղի իոնից, գործնականում շատ կարևոր է նաև քիրալային լիգանդի կառուցվածքը, որը պետք է պարունակի կենտրոնական մետաղի իոնի հետ կապվող ֆունկցիոնալ խմբեր: Այն պետք է պարունակի նաև մոլեկուլային սիմետրիայի էլեմենտներ և շրջակա տարածության առանձին մարզերը տարածականորեն կամ էլեկտրոնային սկզբունքով տարբերող խմբեր: Բացի դրանից, լիգանդը պետք է օժտված լինի կամ կառուցվածքային կոշտությամբ կամ էլ կմախքային ճկունությամբ, կախված ռեակցիայի պայմաններից: Միջֆազային կատալիզատորներ են օգտագործվել պրոֆեսոր Յու. Ն. Բելոկոնի և աշխատակիցների կողմից, ովքեր բենզալդեհիդի և (*R,S*)-ալանինի Շիֆի հիմքի ալկիլման ռեակցիաներում կիրառել են (*R,R*)-TADDOL-ը (**1**) և (*S*)-NOBIN-ը (**2**) (նկար 2):



Նկար 2. (*R,R*)-TADDOL, (*S*)-NOBIN կատալիզատորների կառուցվածքը


Դրանց կիրառմամբ ալկիլման ռեակցիաները սենյակային ջերմաստիճանում ընթանում են ընդամենը 10 մոլ% կատալիզատորի առկայությամբ, 81% քիմիական ելքով և 82 % էնանտիոմերային մաքրությամբ (*R*)-բացարձակ կառուցվածքի α -տեղակալված α -ամինաթթուների առաջացմամբ^{85-88,92}:

Հետազոտական այդ խմբի կողմից էնանտիոսելեկտիվ ալկիլման համար կիրառվել է նաև գլիցինի և (2-բենզոիլֆենիլ)ամիդոպիրիդիլ-2-կարբոնաթթվի (PBP) հետ Ni^{2+} իոնի առաջացրած աքիրալ կոմպլեքսը (**3**): Այս կոմպլեքսի մակրոկառուցվածքը ապահովում է

նան սուբստրատի և օգտագործվող կատալիզատորի միջև կոորդինացիոն փոխազդեցություններ C-ալկիլման ռեակցիայի իրականացման ժամանակ:

Համակարգի կառուցվածքային կոշտությամբ պայմանավորված (*S*)-NOBIN –ով կատալիզված ասիմետրիկ ալկիլման ռեակցիաներն ընթանում են տարածականորեն խիստ ուղղորդված միջանկյալ անցումային վիճակով և ապահովում 92-95 % սինթետիկ սելեկտիվություն (սխեմա 1):

Սխեմա 1





Ալկիլման ռեակցիաներն ընթանում են բավականին արագ (8 րոպե), որը հնարավորություն է ընձեռում այն կիրառել նաև իզոտոպներով նիշակրված (¹⁸F, ¹¹C և այլն) ամինաթթուների ստացման պրոցեսներում:

Համեմատաբար վերջերս ակադեմիկոս Ա. Ս. Սաղյանի ղեկավարած գիտական խմբերից մեկի կողմից սինթեզվել են նավթոլի օպտիկապես մաքուր նոր ածանցյալներ՝ (*S*)- և (*R*)-3,3'-բիս(դիֆենիլդիհիդրօքսիմեթիլ)-1,1'-բինավթիլ-2,2'-դիոլ՝ BIMBOL (6) և դրա մոնո և տետրալիթիումական և կալիումական աղերը, որոնք որպես քիրալային կատալիզատորներ հետազոտվել են գլիցինի աքիրալ սուբստրատին (3) մեթիլակրիլատի ասիմետրիկ միացման ռեակցիայում, իրականացված ՄՖԿ պայմաններում: Արդյունքում, ցույց է տրվել, որ 10% BIMBOL-ի կամ նրա տետրակալիումական աղի ներկայությամբ միացման ռեակցիան ավարտվում է 5-7

որպես՝ 68-86% էնանտիոմերային մաքրությամբ (S)-Glu-ի առաջացմամբ⁸⁹ (նկար 3, սխեմա 2):

Սխեմա 2




Նկար 3. (S)-BIMBOL-ի կառուցվածքը


Որպես քիրալային կատալիզատորներ հաջողությամբ կիրառվել են նաև անցումային շարքի մետաղների սալենային կոմպլեքսները^{90,91}:

Պարզվել է, որ Ni^{II} և հատկապես Cu^{II} իոնների սալենային կոմպլեքսները միջֆազային ալկիլման ռեակցիաներում կարող են հանդես գալ որպես ֆազային փոխադրիչներ: Որպես հետազոտման օբյեկտ ընտրվել է O' Donnellի սուբստրատի (10) ալկիլման ռեակցիան բենզիլբրոմիդով տոլուոլի միջավայրում և պինդ NaOH-ի և 1-10% կատալիզատորի առկայությամբ (սխեմա 3): Արդյունքները բերված են աղյուսակ 1-ում, որտեղից ակնհայտ է, որ առավել արդյունավետ է Cu^{II} -ի (14) կատալիզատորը:

Մխենա 3



10



Kat 11-14

- 11. $R^1 = R^2 = (CH_2)_4$, $R^3=R^4= R^5=H$, $M= Ni$;
- 12. $R^1 = R^2 = (CH_2)_4$, $R^3=R^4= R^5=H$, $M= Cu$;
- 13. $R^1 = R^2 = (CH_2)_4$, $R^3=R^4= H$, $R^5=Bu^t$, $M= Cu$;
- 14. $R^1 = R^2 = H$, $R^3= R^4 = (CH_2)_4$, $R^5=H$, $M= Cu$;

Աղյուսակ 1

Սալենային կատալիզատորներով (11-14) *O'* Donnellի սուբստրատի ալկիլման արդյունքները


	կատալիզատոր	մոլ,%	հիմք, էկվ	քիմ. ելք	ee, %
1	11	10	NaOH, 1.2	34	30 (R)
2	12	10	NaOH, 1.2	82	89 (R)
3	13	10	NaOH, 1.2	97	6(R)
4	14	1	NaOH, 3.0	71	92 (S)
5	14	2	NaOH, 3.5	91	88 (S)

Ուսումնասիրելով բենզալդեհիդի և (*R,S*)-ալանինի մեթիլ էսթերի Շիֆի հիմքի C-ալկիլման ռեակցիան Cu^{II} –ի (**14**) սալենային կոմպլեքսային կատալիզատորների առկայությամբ, հետազոտողների բրիտանական խումբը նույնպես արձանագրել է վերջանյութի առավել բարձր (81% սպիմետրիկ ելքով և 91% քիմիական ելքով) արդյունք:

Սալենային կառուցվածքի քիրալային կատալիզատորները առաջին անգամ սինթեզվել և հետազոտվել են E. Jacobsen-ի և T. Katsuki-ի կողմից, ովքեր իրարից անկախ


1990 թ-ին իրականացրել են դի-, տրի- և տետրատեղակալված զուգորդված օլեֆինների ասիմետրիկ էպօքսիդացման ռեակցիաներ՝ $ee > 97\%$ ⁹³⁻¹⁰⁰:

T. Katsuki-ին և գործընկերները ցույց են տվել, որ 5,5'-դիիբրում էլեկտրոդոնոր տեղակալիչներ պարունակող Co^{III} -ի բիս-սալիցիլիդենային **15** կոմպլեքսները (նկար 4) ցուցաբերել են բարձր տրանս-սելեկտիվություն (տրանս : ցիս = 96:4) ցիկլոպրոպանացման ռեակցիաներում^{99,101}, իսկ Ti^{IV} -ի **16**-կոմպլեքսը N-մեթիլիմիդազոլի առկայությամբ ցուցաբերում է բարձր *ghu*-սելեկտիվություն (ցիս : տրանս = 98:2):



Նկար 4. Սալենային կառուցվածքի կատալիզատորներ

Հետազոտողների խումբը ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Ս. Մաղյանի և Վ. Ի Մալեվի ղեկավարությամբ սինթեզել են Co^{III} իոնի օկտաէդրիկ սալենային բնույթի անիոնային կոմպլեքսներ, որոնք որպես հակաիոններ պարունակում են Na^+ և Li^+ կատիոններ, որոնք հետազոտվել են ալդեհիդների տրիմեթիլսիլիլացման ռեակցիաներում՝ որպես քիրալային կատալիզատորներ (նկար 5)^{102,103}:



Նկար 5. Co^{III} իոնի բիս-սալիցիլիդենային կոմպլեքսների կառուցվածքը

Արդյունքում պարզվել է, որ նման համակարգերի կատալիտիկ ակտիվությունը էականորեն պայմանավորված է այդ կոմպլեքսների մոդիֆիկացման բնույթից:

Ընդհանրացնելով վերը բերված փաստերը, կարելի է եզրակացնել, որ անցումային շարքի մետաղների սալենային կոմպլեքսները ցուցաբերում են բարձր ստերեոսեյլեկտիվություն զանազան բնույթի ասիմետրիկ սինթեզի ռեակցիաներում:

1.2.3. Մետաղակոմպլեքսների կիրառությունը որպես պիրիդոքսալային ֆերմենտների մոդելներ α - ամինաթթուների ստեխիոմետրիկ ասիմետրիկ սինթեզի ռեակցիաներում

Գրական ակնարկի վերլուծությունից ակնհայտ դարձավ, որ պիրիդոքսալային ֆերմենտների լավագույն մոդելային համակարգեր կարող են լինել անցումային շարքի մետաղների այն կոմպլեքսները, որոնք կազմված են ամինաթթուների և պիրիդոքսալային ալդեհիդի կամ նրա կարբոնիլային նմանակների շիֆային հիմքերից: Դրանք հետազոտվել են պիրիդոքսալային ֆերմենտների ազդեցության մեխանիզմով օրգանիզմներում ընթացող ռացեմիզացման, ռետրոալդոլային ճեղքման (C-C կապի խզում), α, β և β, γ -էլիմինացման և միացման, C-ալկիլման և այլն ռեակցիաներում, ինչպես դրանց մեխանիզմների պարզաբանման, այնպես էլ արդյունավետ կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզի իրականացման համար: Արդյունքում պարզվել է, որ α և β -տեղակալված α -ամինաթթուների կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզի իրականացման համար անհրաժեշտ է ունենալ պիրիդոքսալային ֆերմենտների այնպիսի պարզ մոդելային համակարգեր, որոնք օժտված կլինեն՝


- քիմիական կայունությամբ և ստերեոքիմիական իներտությամբ՝ ամինաթթվային փոխարկումների ժամանակ,
- ամինաթթվային մնացորդների բարձր CH թթվայնությամբ և դեհիդրոամինաթթվային մնացորդների C=C կապերի էլեկտրոֆիլությամբ՝ C-ալկիլման և նուկլեոֆիլ միացման ռեակցիաներում,
- բարձր էնանտիոսեյլեկտիվությամբ՝ ռեակցիաների էնանտիոսեյլեկտիվ ընթացքի ապահովման համար:

Հայտնի է, որ Շիֆի հիմքերի ամինաթթվային մնացորդի CH-թթվայնությունը զգալիորեն մեծանում է մետաղի իոնի հետ նրա լրացուցիչ կոորդինացման դեպքում¹⁰⁴:

Այդպիսի կոմպլեքսներում, հիմքի ազդեցությամբ առաջանում է կարբանիոն, որն էլ փոխազդում է էլեկտրոֆիլի հետ: Պարզվել է նաև, որ կիրառական տեսակետից ավելի նպաստակահարմար են այն քիրալային կոմպլեքսները, որոնցում որպես լիգանդ օգտագործվում է ամինաթթվի շիֆային հիմքը, այլ ոչ թե ազատ ամինաթթուն: Արդյունքում, այդ կոմպլեքսներում α -պրոտոնի շարժունակությունը ավելի է մեծանում, իսկ ամինախումբը դառնում է պաշտպանված, իսկ տետրադենտանտ լիգանդն ապահովում է բարձր էնանտիոսելեկտիվությամբ օժտված կոշտ կառուցվածք, քան ազատ ամինաթթվի կոմպլեքսի դեպքում: Ընդ որում, էլեկտրոֆիլի հարձակման ուղղությունը որոշվում է կոմպլեքսում ամինաթթվային մնացորդի քիրալային շրջափակմամբ: Հետևապես, այդպիսի քիմիական համակարգերը նմանակում են ՊՖ-կախյալ ֆերմենտների ազդեցության մեխանիզմները, որոնց արդյունքում օրգանիզմում տեղի են ունենում ասիմետրիկ փոխարկումներ: Կարելի է ենթադրել նաև, որ անցումային շարքի մետաղների դեհիդրոամինաթթվային կոմպլեքսներում նույնպես առկա են բավարար կայունություն, C=C կապի բարձր էլեկտրոֆիլություն և բավարար էնանտիոսելեկտիվություն, ինչն էլ ապահովում է նուկլեոֆիլ միացման ասիմետրիկ ռեակցիաների էֆեկտիվ էլք՝ β -տեղակալված α -ամինաթթուների առաջացմամբ:

Արդեն անցած դարի 80-ական թվականներին տպագրվել են աշխատանքներ, որոնցում նկարագրված են α -ամինաթթուների և կարբոնիլային ռեագենտների Շիֆի հիմքերով Ni^{II} իոնի առաջացրած հարթ քառակուսային կոմպլեքսների սինթեզն ու դրանց կիրառումը α -ամինաթթուների ասիմետրիկ ստեխիոմետրիկ սինթեզի ռեակցիաներում: Այսպես, (*S*)-կոնֆիգուրացիայով բնական պրովին ամինաթթվի հիման վրա ստեղծվել են α -ամինաթթուների սինթեզը ինդուցող և տեխնոլոգիապես մատչելի ու ռեգեներացվող քիրալային ռեագենտներ՝ (*S*)-2-N-(N'-բենզիլպրովիլ)ամինաբենզալդեհիդը [(*S*)-BBA, **18**] (*S*)-2-N-(N'-բենզիլպրովիլ)ամինաացետաֆենոնը [(*S*)-BAP, **19**] և (*S*)-2-N-(N'-բենզիլպրովիլ)ամինաբենզոֆենոնը [(*S*)-BPB, **20**] (նկար 6): Պետք է ընդգծել, որ կոշտ բազմացիկլիկ համակարգով կոմպլեքսների օղակներից մեկում գտվող (*S*)-Pro-ի քիրալային կենտրոնը որոշում է մնացած օղակների կոնֆորմացիան և փոխադարձ դասավորությունը տարածության մեջ: Ընդ որում, բացի փորձարարական մի շարք առավելություններից, նման կառուցվածքով քիրալային կոմպլեքսների օգտագործումը

ամինաթթուների ալկիլման ռեակցիաներում ապահովում է նաև բարձր ստերեոսելեկտիվություն:




Նկար 6. Քիրալային օժանդակ ռեագեններ բնական (*S*)-Pro ամինաթթվի հենքի վրա

Այդ կոմպլեքսներում առկա մետաղի իոնի ունեցած հարթ-քառակուսային երկրաչափական կառուցվածքի շնորհիվ, իսելատային օղակները աղավաղված են այնպես, որ N-բենզիլպրոլինի մնացորդի ֆենիլային օղակը էկրանացնում է կոմպլեքսներում առկա ամինաթթվային մնացորդը Շիֆի հիմքի հարթության *re* կողմից, *si* կողմը թողնելով ազատ ալկիլոդ ռեագենտի համար: Այդ իր հերթին ապահովում է (*S*)- α -ամինաթթուների բարձրստերեոսելեկտիվ սինթեզ (միջինը՝ *ee* > 90%):

Փորձնական հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ Co^{III} և Al^{III} իոնների օկտաէդրիկ կոմպլեքսների փոխարեն Ni^{II} իոնի կոմպլեքսների կիրառումը զգալիորեն մեծացնում է ստերեոսելեկտիվ էֆեկտները: Բացի այդ, Ni^{II} իոնի կոմպլեքսները բավարար կայուն և ստերեոքիմիապես իներտ են ամինաթթվային փոխարկումների ժամանակ: Իսկ իրենց դիամագնետիկության հանգամանքը հնարավորություն է ընձեռում կոմպլեքսների կառուցվածքի պարզաբանման ժամանակ լայնորեն կիրառել ՄՄՌ ¹H մեթոդը: Դրանց ամինաթթվային մնացորդներն ունեն բարձր CH-թթվայնություն և դեհիդրոամինաթթվային մնացորդների էլեկտրոֆիլություն, լավ լուծելի են օրգանական լուծիչներում և վատ ջրում, ինչը զգալիորեն հեշտացնում է դրանց անջատումը ռեակցիոն խառնուրդներից: Կոմպլեքսների այդ հատկությունները մասնավորապես օգտագործվել են տարբեր երկրների հետազոտական խմբերի կողմից (Յու.Ն. Բելոկոն՝ ՌԴ, Ա.Ս. Սադյան՝ Հայաստան և Վ.Ա. Սոլոշոնոկ՝ ԱՄՆ) տարբեր կառուցվածքի (*S*)- և (*R*)- α -ամինաթթուների ասիմետրիկ ստեխիոմետրիկ սինթեզի ռեակցիաներում¹⁰⁵⁻¹⁰⁸: Ընդհանուր առմամբ, այդ կոմպլեքսների կիրառմամբ արդեն

սինթեզվել են ավելի քան 200 օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուներ: Մի շարք ամինաթթուների (ալանին, վալին, սերին և (E)-դեհիդրոամինոկարապաթթու) կառուցվածքը հաստատվել է ՌԿԱ մեթոդով: Ցույց է տրվել, որ N-բենզիլպրովինի մնացորդի ֆենիլային օղակը էկրանացնում է Ni^{II} իոնի ապիկալ կողմը, ամինաբենզոֆենոնային մնացորդի արմատիկ օղակը հարթ կոորդինացված Ni^{II} իոնի հետ գտնվում է գրեթե նույն հարթության մեջ, իսկ C=N կապի մոտ գտնվող ֆենիլային օղակը ուղղահայաց է խելատային օղակի հարթությանը: Ցույց է տրվել նաև, որ (S)-կոնֆիգուրացիայով քիրալային ռեագենտի կոմպլեքսների դեպքում էներգետիկորեն ավելի ձեռնտու է (S)- α -ամինաթթուների առաջացումը¹⁰⁹: ՌԿԱ տվյալների և կոնֆորմացիոն հաշվարկների հիման վրա հեղինակները ցույց են տվել, որ բարձր թերմոդինամիկական էնանտիոսելեկտիվության առկայությունն այդ կոմպլեքսներում պայմանավորված է (R)- α -ամինաթթվային մնացորդով դիաստերեոմերի պիրո-լիդինային մնացորդի բենզիլային օղակի և ամինաթթվային մնացորդի կողմնային R ռադիկալի միջև գոյություն ունեցող չկապակցող փոխազդեցություններով (նկար 7):




Նկար 7. Ni^{II}–(S)-BPB–(S)-Ala կոմպլեքսի մոլեկուլյար կառուցվածքը ըստ ռենտգենկառուցվածքային անալիզի տվյալների


(S)- α -ամինաթթվի պարունակությամբ դիաստերեոմերային կոմպլեքսներում այդպիսի փոխազդեցությունները թույլ են արտահայտված, որի շնորհիվ դրանց առաջացումը էներգետիկորեն ձեռնտու է¹⁰⁹:

Ալդիմինային ածխածնի ատոմի մոտի R-տեղակալիչի ծավալի մեծացումը (S)-BBA-ից (S)-BPB-ին անցնելիս բերում է մետաղացիկների լրացուցիչ աղավաղման, ինչի շնորհիվ (R)-կոնֆիգուրացիայով կողմնային շղթան ընդունում է պսևդոաքսիալ դիրք, որը նպաստում է սինթեզի ստերեոսելեկտիվության աճի՝ քիրալային ռեագենտների հետևյալ շարքում՝ (S)-BBA < (S)-BAP < (S)-BPB (25%-ից մինչև 90%): Այդ կոմպլեքսների մոդիֆիկացված տարբերակները կիրառվել են նաև այլ հետազոտական խմբերի կողմից: Մասնավորապես, ուսումնասիրվել են պրոլինի ազոտի տեղակալիչներով տարբերվող լիգանդների ստերեոդիֆերենցող հատկությունները¹¹⁰: Ընդ որում, հեղինակներն օգտագործել են մետաղի կենտրոնական իոնի հետ լրացուցիչ կոորդինացման հնարավորություն ունեցող տեղակալիչներ և հակառակ սպասումների, դրանցում կենտրոնական մետաղի իոնը պահպանել էր սկզբնական հարթ-քառակուսային կառուցվածքը: Այդուհանդերձ, այդպիսի մոդիֆիկացիայի արդյունքում խելատային օղակները լրացուցիչ աղավաղվեցին, որն էլ բերեց ամինաթթվային մնացորդների ավելի արդյունավետ էկրանացման Շիֆի հիմքի հարթության *re* կողմից:

(S)- α -ամինաթթուների արդյունավետ ասիմետրիկ սինթեզի համար օգտագործվել են նաև (S)-2-[N-(2,4,6-տրիմեթիլբենզիլ)պրոլիլ]ամինաբենզոֆենոն և (S)-2-[N-(3,4-դիքլորբենզիլ)պրոլիլ]ամինաբենզոֆենոն քիրալային օժանդակ ռեագենտներով գլիցին ամինաթթվի նմանատիպ կոմպլեքսներ^{110,111} (նկար 8):



R=2-N-, R'= H (21); R=3-N, R'=H(22);
R=2-N-, R'= CH₃ (23); R=3-N, R'=CH₃(24);



R₂= R₄= R₆= CH₃, R₃=H (25)
R₂= R₆= H, R₃= R₄= Cl (26)


Նկար 8. (S)-2-[N-(2,4,6-տրիմեթիլբենզիլ)պրոլիլ]ամինաբենզոֆենոն և (S)-2-[N-(3,4-դիքլորբենզիլ)պրոլիլ]ամինաբենզոֆենոն քիրալային օժանդակ ռեագենտների ամինաթթվային կոմպլեքսների կառուցվածքը

Փորձնական հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ ինչպես սինթեզի ստերեոսելեկտիվության, այնպես էլ ասիմետրիկ ռեակցիաների տևողության տեսանկյունից, առավել արդյունավետ են եղել **25** և **26** կոմպլեքսները:

Ni^{II}-ի դեհիդրոամինաթթվային կոմպլեքսները հետազոտվել են նաև β-տեղակալված α-ամինաթթուների ասիմետրիկ սինթեզի ռեակցիաներում և հիմնականում թերմոդինամիկորեն վերահսկվող նուկլեոֆիլ միացման այդ ռեակցիաների ստերեոսելեկտիվությունը տատանվում էր 90%-ի սահմաններում¹¹²⁻¹¹⁴:

Վերը շարադրվածից երևում է, որ քիրալային օժանդակ ռեագենտների հիման վրա կառուցված Ni^{II}-ի ամինաթթվային կոմպլեքսները որպես ՊՖ-ֆերմենտների կենսամիմետիկ մոդելային համակարգեր, բավարարում են պիրիդոքսալային կատալիզի կրկնօրինակման անհրաժեշտ պայմաններին և դրանց կարելի է արդյունավետ օգտագործել ամինաթթուների ասիմետրիկ սինթեզի ռեակցիաներում: Այդ կոմպլեքսների ամինաթթվային մնացորդների ալկիլման ռեակցիաներն ընթանում են մեղմ պայմաններում, դրանց հիման վրա մշակված մեթոդներն ունիվերսալ են և տեխնոլոգիապես մատչելի (սխեմա 4):

Մխեմա 4




Նշված կոմպլեքսային համակարգերի եզակի թերություններից կարելի է համարել

ալկիլման ռեակցիաների համեմատական ցածր ստերեոսելեկտիվությունը (*ee* ~90 %) և պրոցեսների երկարատևությունը (2-48 ժամ): Հատկապես անթույլատրելի է կինետիկորեն վերահսկվող ստերեոսելեկտիվությունը (*ee* ~ 60 %), ինչը անցանկալի է α -տեղակալված α -ամինաթթուների սինթեզի պարագայում, որտեղ բացակայում է թերմոդինամիկական վերահսկողության փուլը:

Վերջին տասնամյակում, ակադեմիկոս Ա.Ս. Սադյանի գիտական խմբերի կողմից սինթեզվել և հետազոտվել են *N*-բենզիլպրոլինային մնացորդի ֆենիլային օդակի 2-րդ դիրքում հալոգեն (Cl, F) տեղակալիչ պարունակող մոդիֆիկացված քիրալային օժանդակ ռեագեններ՝ (*S*)-2-CBPB և (*S*)-2-FBPB և դրանց ամինաթթվային կոմպլեքսներ: Արդյունքում, մշակվել են α - և β - տեղակալված (*R*)-, (*S*)- α -ամինաթթուների բարձրսելեկտիվ (*ee* >97 %) և համեմատաբար կարճաժամկետ (3-90 րոպե) ասիմետրիկ սինթեզի մեթոդներ^{115,116}: Այդ կոմպլեքսների կիրառմամբ α - և α -մեթիլտեղակալված α -ամինաթթուների սինթեզը բերված է սխեմա 5-ում:


Սխեմա 5



Կատարված հիմնարար հետազոտությունների արդյունքում բացահայտվել է, որ *N*-բենզիլպրոլինի մնացորդի ֆենիլային օդակի 2-րդ դիրքում քլոր տեղակալիչի և Ni^{II} - իոնի միջև էլեկտրաստատիկ ձգողական փոխազդեցությունների շնորհիվ էական փոփո-

խության է ենթարկվում կոմպլեքսի մակրոկառուցվածքը, ինչը խթանում է կոմպլեքսում առկա էնանտիոսելեկտիվային էֆեկտները և նպաստում ակիլման պրոցեսի կրճատմանը և ստերեոսելեկտիվության մեծացմանը: Տեսական պատկերացումների հիման վրա ենթադրվում էր, որ Cl-տեղակալիչի փոխարեն առավել էլեկտրաբացասական ֆտոր տեղակալիչի ներմուծումը *N*-բենզիլպրոլինի մնացորդի ֆենիլային օղակի 2-րդ դիրք էլավելի կկրճատի ակիլման ռեակցիաների տևողությունն ու կմեծացնի ստերեոսելեկտիվությունը: Դա հասկապես կարժեվորեր այդ մեթոդները՝ ՊԷՏ-ախտորոշման գործընթացներում կիրառվող ֆարմաքեպարատների՝ նիշակրված ^{18}F իզոտոպներ պարունակող α -ամինաթթուների ստացման համար:

Ինչպես գլիցինի, այնպես էլ ալանինի ֆտոր պարունակող մոդիֆիկացված կոմպլեքսների կիրառման դեպքում նկատվել է ռեակցիաների տևողության կտրուկ կրճատում (3-70 րոպե), սակայն ռեակցիաների ստերեոսելեկտիվությունը հիմնականում մնաց Cl-տեղակալիչ պարունակող նմանատիպ կոմպլեքսների արդյունավետության մակարդակին ($ee > 97\%$)՝ պայմանավորված այդ կոմպլեքսներում առկա երկրորդ ատրոպոիզոմերով: Վերջինիս պատճառն ըստ հեղինակների կապված է կոմպլեքսների մետաղի իոնի կոորդինացիոն հարթության վերևում *N*-բենզիլպրոլինային ֆրագմենտի դանդաղ պտույտով¹¹⁶ և (նկար 9):



Ա- մաքուր ատրոպոիզոմեր

Ա- և Բ-ատրոպոիզոմերի խառնուրդ

Նկար 9. Ni^{II} -(*S*)-2-FBPB-(*S*)-Ala կոմպլեքսի ա) և բ) ատրոպոիզոմերների խառնուրդի և մաքուր ա) ատրոպոիզոմերի կառուցվածքը ըստ ՌԿՄ տվյալների

Այն խանգարում է բարձր օպտիկական մաքրությամբ նպատակային ամինաթթվի

ստացմանը անմիջապես սինթեզի փուլում: Հետևապես, օպտիկապես մաքուր ամինաթթու ստանալու նպատակով, հաճախ առաջացած դիաստերեոմերային կոմպլեքսների խառնուրդը ենթարկվում է քրոմատոգրաֆացման կամ վերաբյուրեղացման: Հետևաբար ատրոպոխիզոմերիան բացառող, ամինաթթվային մնացորդների բարձր ռեակցիոնունակությամբ օժտված նոր մոդիֆիկացված ամինաթթվային կոմպլեքսների սինթեզն ու դրանց կիրառմամբ օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուների, ներառյալ β-բենզոիլֆենիլ տեղակալված ամինաթթուների բարձրսելեկտիվ մեթոդների մշակումը մնում է արդիական խնդիր:

Համաձայն տեսական պատկերացումների առավել ծանր և ծավալուն Br-տեղակալիչի ներմուծումը քիրալային ռեագենտի 2-րդ դիրք կարող է բացառել N-բենզիլպրոլինային ֆրագմենտի դանդաղ պտույտը մետաղի կոորդինացիոն հարթության վերևում, հետևապես և նոր ատրոպոխիզոմերի առաջացումը:

Նման գերարդյունավետ քիրալային օժանդակ ռեագենտների ստացումն այսօր հրատապ և անհրաժեշտ է վերջին ժամանակներս բժշկական թերապիայում լայնորեն կիրառություն գտնող օպտիկապես մաքուր տարբեր կառուցվածքի ոչ սպիտակուցային ամինաթթուների փոքրածավալ արտադրություն կազմակերպելու համար:

1.3. Քիրալային մաքուր ազլիկոններ և դեղանյութեր դրանց հիման վրա

Քիրալայնությունը մոլեկուլի երկու տարածական ստերեոիզոմերների ձևով հանդես գալու և ազատ աջ կամ ձախ պտտվելու հատկությունն է: Ամինաթթուների պարագայում այն պայմանավորված է քիրալային ածխածնի ատոմի առկայությամբ:

Բջջիների քիրալային ռեցեպտորները, որոնք պատասխանատու են մոլեկուլների «բռնման» համար, նույնպես ունեն այդպիսի պտույտի հնարավորություն (քիրալայնություն): Մոլեկուլը կարող է լինել քիրալայնորեն ճիշտ կամ ոչ ճիշտ, այսինքն բջջի ռեցեպտորների կողմից կարող են յուրացվել կամ չյուրացվել: Դա ասենք նման է այն բանին, որ ձախ ձեռքի ձեռնոցը չի կարելի հագցնել աջ ձեռքին և հակառակը: Վերջին տասնամյակներից սկսած նյութերի քիրալայնության հարցը կիրառական տեսանկյունից ակտիվորեն քննարկվում է նաև բժշկական թերապիայում և կոսմետոլոգիայում:

Եթե քսուրը կամ նրբաքսուրը պարունակում է նյութեր, որոնց քիրալայնությունը չի համընկնում մաշկի բջջիների ռեցեպտորների քիրալայնության հետ, ապա ինչպիսի

օգտակար նյութերով էլ այն հագեցված լինի, նրանք կամ չեն յուրացվում, կամ էլ յուրացվում են մասնակիորեն: Գիտնականներն ապացուցել են, որ մաշկի բջիջների ռեցեպտորների յուրացման աստիճանը կախված է յուրացվող նյութի աջ կամ ձախ պտտվելու հատկությունից: Օրինակ, ասկորբինաթթուն (վիտամին C) ունի երկու իզոմեր. Ձախ պտտվող-L, և աջ պտտվող՝ D: Մինչ այժմ դասական վիտամին C-ն իրենից ներկայացնում էր այդ երկու ձևերի խառնուրդ՝ 50:50 հարաբերությամբ և այդ ձևով էլ մտցվում էր քսուքի մեջ: Բայց պարզվել է, որ ձախ պտտվող (L) ասկորբինաթթուն ավելի արդյունավետ է և հեշտ է յուրացվում մաշկի կողմից և քիչ գրգռում այն: Դժբախտաբար առ այսօր դեռևս քիչ են այն ֆիրմաները, որոնք սեփական արտադրանքի պիտակների վրա նշում են պրեպարատի քիրալայնության մասին:


Կյանքի համար շատ կարևոր և անհրաժեշտ մոլեկուլներ գոյություն ունեն երկու իզոմերների տեսքով, որոնք քիրալային են, քանի որ նրանց անդրադարձումները հարթ հայելու մեջ չեն կարող իրար վերադրվել նույնաբար: Գործնականում բոլոր բիոպոլիմերները պետք է լինեն հոմոքիրալ (բոլոր ֆունկցիոնալ խմբերն ունեն նույն ուղղվածությունը), որպեսզի իրականացնեն իրենց ֆունկցիան: Բոլոր ամինաթթուները սպիտակուցների բաղադրության մեջ ձախակողմյան են, այն դեպքում, երբ ԴՆԹ-ի, ՌՆԹ-ի մեջ, ինչպես նաև մետաբոլիզմի ուղիներում բոլոր շաքարները աջակողմյան են: Խառնուրդը, որը պարունակում է 50% աջակողմյան և 50% ձախակողմյան ձևերից անվանվում է ռացեմատ: Ռացեմատային պոլիպեպտիդները չեն կարող առաջացնել հատուկ կառուցվածքներ, որոնք անհրաժեշտ են ֆերմենտներին, քանի որ այդ դեպքում նրանց կողմնային շղթաները անկանոն կտատանվեն աջ ու ձախ: Այդպես էլ, ոչ ճիշտ քիրալայնության ամինաթթուն քանդում է սպիտակուցների կայունացնող α -շղթան: ԴՆԹ-ն չի կարող լինել կայուն, եթե նույնիսկ մեկ ամինաթթու լինի ոչ ճիշտ քիրալայնության և չի կարող կազմել երկար շղթա: Դա նշանակում է, որ ԴՆԹ-ն չի կարող պահել ողջ տեղեկատվությունը և պահպանել կյանքը:

Սովորաբար ամինաթթուների D-ձևերը քաղցր են, իսկ L-ձևերը համ չունեն: Դադձի տերևները և չամանի տերևները պարունակում են L-կարվոն և D-կարվոն: Դրանք ունեն տարբեր հոտեր, քանի որ մարդկանց հոտառության ռեցեպտորները պարունակում են քիրալային մոլեկուլներ և տարբեր էնանտիոմերների ներկայությամբ

իրենց տարբեր ձևով են դրսևորում: Բժշկական պրակտիկայում լայն կիրառություն ստացած բազմաթիվ դեղապատրաստուկներ, որպես դեղաբանորեն ակտիվ ազդիկոն (բաղադրամաս) պարունակում են քիրալային մաքուր որևէ ամինաթթու⁶: Այդ տեսակետից առավել կարևոր են ոչ սպիտակուցային ծագման α -ամինաթթուները և D-ամինաթթուները: Մասնավորապես հայտնի է, որ պեպտիդային բնույթի դեղապատրաստուկի մեջ սպիտակուցային ամինաթթվի փոխարինումը նրա ոչ սպիտակուցային անալոգով, բերում է դեղի ազդեցության երկարացման և հետևաբար արդյունավետության մեծացմանը: Դա պայմանավորված է նրանով, որ դեղն ընդունելուց հետո որպես օրգանիզմի համար օտար միացություն, այն անմիջապես ենթարկվում է օրգանիզմի պաշտպանական ֆունկցիաներն ապահովող ֆերմենտային համակարգի դեստրուկտիվ ազդեցությանը: Պեպտիդային կառուցվածքի դեղապատրաստուկների դեպքում նման ֆունկցիաները մասնավորապես իրականացնում են պրոտեոլիտիկ ֆերմենտները: Ոչ սպիտակուցային ամինաթթուները օրգանիզմ ներմուծելու դեպքում, շնորհիվ նրանում առկա օտար ռադիկալի, դժվարությամբ է ազդվում ֆերմենտային համակարգի կողմից, ինչն էլ երկարաձգում է դեղի ազդեցության ժամկետը: Շնորհիվ նման հատկության, ոչ սպիտակուցային ամինաթթուները հաջողությամբ կիրառվում են հակաքաղցկեղային, հիպերտենզիվ և այլ դեղամիջոցների արտադրության մեջ: Օրինակ L- α -մեթիլ-3,4-դիօքսիֆենիլալանինի ներմուծումը DOPA դեղապատրաստուկի կազմի մեջ, բացառում է Պարկինսոնի հիվանդության բուժման ժամանակ ոչ ցանկալի երկրորդային երևույթները, α -մեթիլ- L-թիրոզինը, α -մեթիլ-L-ֆենիլալանինը և α -մեթիլ-L-տրիպտոֆանն օժտված են վառ արտահայտված հակահիպերտոնային ակտիվությամբ, β -ֆտոր-D-ալանինը կիրառվում է դաշտային վիրաբուժությունում արնահոսության արագ կանգնեցման համար, L-2-մեթիլ-3,4,5-տրիհիդրօքսիֆենիլալանինը օժտված է հակաքաղցկեղային ակտիվությամբ և այլն: Ոչ սպիտակուցային α -ամինաթթուները, որպես դեղաբանորեն ակտիվ կարևոր բաղադրամասեր, մտնում են նաև այլ դեղապատրաստուկների կազմի մեջ: Օրինակ, հակաքաղցկեղային հակաբիոտիկ Լեուցինեստատին A-ն պարունակում է L- α -դիա-մինապրոպիոնաթթվի երեք մնացորդներ, Տուբերակտինոմիցին, Բլեոմիցին Էդենին, Կապրեոմիցին և A-1903 հակաբիոտիկների բաղադրության մեջ մտնում են β -N-ամինա-

տեղակալված α -ամինաթթուներ: D-ալլոիզոլեյցինի ներմուծումը Դակտոնոմիցին-D հակաբիոտիկի բաղադրության մեջ մեծացնում է նրա հակաքաղցկեղային ակտիվությունը: Սիմպատոմիմետիկ պատրաստուկ N-կարբոքսիֆենիլպրոլիլիզինը համարվում է Լիզինոպրիլ հակահիպերտոնային դեղապրեպարատի բաղադրամասը, լիզինի, օքսիպրոլինի և D-ֆենիլալանինի ածանցյալները մտնում են Լեուպրոլիդ, Օկտրոտեդիտ Թուֆսին հակաքաղցկեղային պրեպարատների բաղադրության մեջ:

Քիրալայնորեն մաքուր ամինաթթուները ^{11}C և ^{18}F նիշադրված ածանցյալների տեսքով վերջերս մեծ հետաքրքրություն են առաջացրել պոզիտրոնային էմիսիոնային տոմոգրաֆիայում (ՊԷՏ), որպես ռադիոդեղապատրաստուկներ՝ տարբեր հիվանդությունների արագ և արդյունավետ ախտորոշման համար, ներառյալ վաղաժամ էտապում քաղցկեղային բջիջների ախտորոշումը: 2000-ական թվականների սկզբին գիտնականներին հաջողվել է պարզել, որ ^{11}C և ^{18}F նիշակիր քիրալայնորեն մաքուր ամինաթթուները, որպես ՊԷՏ ախտորոշման ռադիոդեղապատրաստուկներ՝ առավել արդյունավետ են, քան մինչ այդ լայն կիրառություն ստացած ^{18}F նիշակիր ֆտորդեզօքսիգլյուկոզը՝ FDG (56): Հետազոտությունները ցույց են տվել, որ նիշակիր ամինաթթուները ավելի արագ և քանակապես են ներդրվում վնասված պատերով քաղցկեղային բջիջների մեջ, քան առողջ բջիջների մեջ: Սակայն ներդրվելով բջջի մեջ, դրանք չեն մասնակցում սպիտակուցների հետագա սինթեզին և առաջացնում են պոզիտրոնային կուտակումներ քաղցկեղային բջիջներում, ինչն արձանագրվում է ՊԷՏ-ի կողմից, հստակ ֆիքսելով չարորակ նորագոյացումների տեղն ու նրա տարածվածության աստիճանը: Օրինակ, ^{18}F նիշակիր (*S*)-ֆտորդեզօքսիֆենիլալանինը [^{18}F]-FDOPA (54), (*S*)- α -մեթիլ-ֆտորթիրոզինը [^{18}F]- α -MeTyr (55), (*S*)-ֆտորթիրոզինը [^{18}F]-FET (57), և այլն (նկար 10):



Նկար 10. ՊԷՏ-ում կիրառվող որոշ հայտնի ազլիկոնների կառուցվածքը

1.3.1. Քիրալային իզոմերների և դեղաբանական ակտիվության կապը

Հայտնի է, որ դեղապրեպարատի ակտիվ նյութի ազդեցության սկզբունքը կայանում է որոշակի ռեցեպտորների կողմից նրանց ընկալման մեջ: Այդ ընկալման մեջ զարմանալին այն է, որ ռեցեպտորն ու ազդող նյութի մոլեկուլը պետք է իրար իդեալական համապատասխանեն այնպես, ինչպես բանալին ու կողպեքը: Այլ կերպ ասած, բջջաթաղանթի մեմբրանի զգայուն մասի տարածական կառուցվածքը պետք է նման լինի ակտիվ նյութի տարածական կառուցվածքին: Այդպիսի ճանաչման համակարգը գործում է ոչ միայն ֆերմենտների և ռեցեպտորների միացման դեպքում, այլև բջջային մեմբրաններով իզոմերների անցման և հյուսվածքներում ու բջջում նրանց բաշխման ժամանակ:

Քիրալային իզոմերների տարբեր դեղաբանական ակտիվության հիմնական պատճառը ըստ գիտնականների, նրանց օրգանիզմ ներթափանցելու տարբերությունն է, որը կարող է բացատրվել բջջաթաղանթի մեմբրանի կառուցվածքով և դրանցում առկա հատուկ փոխադրիչ համակարգի առկայությամբ: Հայտնի են, օրինակ, այնպիսի համակարգեր, որոնց աշխատանքի արդյունքում L-ամինաթթուների կոնցենտրացիան բջջի ներսում մոտ 500 անգամ գերազանցում է շրջակա միջավայրում նրա %-ին: Միննույն ժամանակ այդպիսի համակարգերով չեն անցնում ամինաթթուների D,L-ռացեմատ արգասիքները: Կամ, սարկոլիզին նյութի L-ձևը այդպիսի փոխադրման ժամանակ ակտիվ է և կիրառվում է որոշ տեսակի ուռուցքների բուժման ժամանակ, մինչդեռ նրա «աջ» տեսակը չի ընդունվում բջջային մեմբրանների կողմից:

Իզոմերների այդպիսի տարբեր դեղաբանական ազդեցության և թողած տարբեր կողմնակի էֆեկտները ընկած են նաև մետաբոլիզմի պրոցեսների ժամանակ, ուստի անհրաժեշտ է հստակ իմանալ, թե որ ձևն է հեշտ ենթարկվում մետաբոլիզմի, ինչպիսին կլինի նրանց կոնցենտրացիան պլազմայում, որպեսզի ճիշտ լինի նրանց դոզավորումը:

Ներկայումս Եվրամիության երկրներում արտադրվող դեղերի միայն 15%-ն է հիմնված որոշակի ակտիվ նյութերի առանձին իզոմերների վրա, իսկ մնացած մասը երկու և ավելի իզոմերներ են պարունակում:

Այդպիսի խառնուրդները, որոնցում խախտված են «ընդունող կողմի» և դեղանյութի մոլեկուլի օպտիկական ձևի համապատասխանությունը, կարող են հանգեցնել անցանկալի երևույթների:

Դրանցից են՝

1. Դեղապրեպարատի ակտիվության զգալի անկում,
2. Հավելյալ կողմնակի էֆեկտների ի հայտ գալը,
3. Մուտագեն և թունավոր ազդեցությունը օրգանիզմի վրա:

Օրինակ, երբ քիմիկոսները սկսել են ինսուլինի սինթետիկ արտադրությունը դիաբետիկ հիվանդների համար, նրանք պարզել են, որ առաջին արտադրանքը բիոլոգիապես ակտիվ չէ: Պատճառն այն էր, որ սինթետիկ պրեպարատը պարունակել է ինչպես (R)-, այնպես էլ (S)- կառուցվածքի ամինաթթու: Իսկ երկարատև էվոլյուցիայի արդյունքում բջջաթաղանթների ինսուլինի ռեցեպտորները փոխազդում են միայն «ձախ» կառուցվածքի նյութերի հետ: Նույնը կարելի է ասել նաև մորֆինի մասին:


Բնական հումքից անջատված այդ նյութը նույնպես ձախ կառուցվածքի իզոմեր է, և ուժեղ ցավազրկող ազդեցություն ունի: Իսկ առաջին սինթետիկ մորֆինը, «աջ» կառուցվածքի էր և պարզվել է, որ այն ընդհանրապես ցավազրկող ազդեցություն չունի: Վերը նշվածներից հետևում է, որ լավագույն դեղամիջոց ստանալու և բուժական պրակտիկայում կիրառելու համար անհրաժեշտ է մշակել առանձին իզոմերների ստացման էնանտիոսելեկտիվ սինթեզի մեթոդներ:

1.3.2. Քիրալային նյութեր պարունակող որոշ հայտնի դեղեր

Շատ քիրալային դեղանյութեր պատրաստվում են բարձր էնանտիոմերային մաքրությամբ, քանի որ հակառակ էնանտիոմեր պարունակող դեղապատրաստուկը սովորաբար ունենում է հակառակ էֆեկտը, լավագույն դեպքում կարող է մնալ չեզոք կամ չունենալ թերապևտիկ ակտիվություն: Օրինակ՝


1. Թալիդոմիդը դեղանյութի ազդող կոմպոնենտի էնանտիոմերներից մեկը արդյունավետ է սրտխառնուկի դեմ, իսկ մյուսը տերատոգեն է (առաջ է բերում խեղանդամություն): Հղիության շրջանում գտնվող կանանց էնանտիոմերներից մեկի տալը չի օգնի, քանի որ էնանտիոմերները հեշտությամբ վեր են ածվում մեկը մյուսի և արյան պլազմայում կլինեն և D- և L- ձևերը:

2. Էտամբուրոլ- էնանտիոմերներից մեկը կիրառվում է տուբերկուլյոզի բուժման համար, իսկ հակառակ անտիպոդը առաջացնում է կուրություն: Ազդող նյութն ունի հետևյալ կառուցվածքը (նկար 11, (58)):




Նկար 11

3. Նապրոկսեն- էնանտիոմերներից մեկը բուժում է արտրիտ (հոդերի բորբոքում), իսկ մյուսը առաջացնում է լյարդի թունավորում և չունի ցավազրկող էֆեկտ: Ազդող նյութը (*S*)-6-մեթօքսի- α -մեթիլ-2-նավթալին-քացախաթթվի Na-ական աղն է (նկար 12, (59)):



Նկար 12

4. L-անալապրինն է միայն հզոր ադրենոռեցեպտոր, իսկ D-ն՝ ոչ: Այնուամենայնիվ անալապրինի երկու իզոմերներն էլ ունեն տեղային անզգայացնող էֆեկտ: Այն ունի հետևյալ ֆորմուլան (նկար 13, (60)):



Նկար 13


5. Ամֆետամինի և պերվիտինի D-իզոմերները կենտրոնական նյարդային համակարգի հզոր խթանիչներ են, իսկ L-իզոմերները չունեն այդ հատկությունները, փոխարենը խթանիչ են պերիֆերիկ նյարդային համակարգի համար: Ուստի պերվիտինի L-իզոմերը կիրառելի է քթով ներս ընդունելու համար (նկար 13, (61)): «Ձախ ձեռքի» կանոնը գործում է նաև Դոպամինի դեպքում, որն ունակ է մարդկանց պաշտպանելու Պարկինսոնի հիվանդությունից: Դրա համար դոպամինը պետք է օրգանիզմ ներմուծվի միայն L-

ստերեոիզոմերի տեսքով (պատրաստուկ L-Dopa):

Նման պատկեր է արձանագրվել նաև որոշ սինթետիկ հորմոնների արտադրության դեպքում: Հակաբեդմնավորման հորմոններ արտադրող ֆիրման ստիպված է եղել սեփական արտադրության պրեպարատի մեջ լցնել նախատեսվածից ավել հորմոնների դոզա: Պատճառն այն էր, որ այն պարունակում էր քիրալային նյութի երկու իզոմերներ, այսինքն նյութը էնանտիոմերապես մաքուր չէր, իսկ անհրաժեշտ ֆունկցիան կատարում էր նրանցից մեկը:

Ցածր էֆեկտիվությունից բացի, նման պրեպարատները լուրջ վնասակար ազդեցություն կարող են թողնել լյարդի վրա, որը ստիպված է տանել երկու իզոմերներին էլ:


“Менарини група” ընկերության լաբորատորիայի կողմից սինթեզվել է նոր սերնդի Deksalgine անալգետիկ պրեպարատը, դեկսլետոպրոֆեն միջազգային նոմենկլատուրային անվանմամբ: Այն գեն-ինժեներային կենսատեխնոլոգիական արտադրանք է, որը պարունակում է թերապևտիկ ակտիվ (*S*)-կետոպրոֆեն, առանց հակառակ (*R*)-էնանտիոմերի⁶: Այն թույլ է տալիս խուսափել անցանկալի մետաբոլիկ պրոցեսներից, նպաստում է պրեպարատի թունավորությունը նվազեցնելուն և ապահովում ավելի վաղ անհրաժեշտ %-ն, ռացեմատ կետոպրոֆենի համեմատ: Պրեպարատի ակտիվ ազլիկոնն է (*S*)-2-մեթիլ-2-(3'-բենզոհիլֆենիլ)պրոպիոնաթթուն (**62**), որի ֆորմուլան բերված է նկար 14-ում:



Նկար 14. (*S*)-2-մեթիլ-2-(3'-բենզոհիլֆենիլ)պրոպիոնաթթու

Սեփական կլինիկական հետազոտության հիման վրա հեղինակները արել են եզրակացություն Դեկսալգին պրեպարատի էֆեկտիվության և հիվանդների կողմից նրա տանելիության վերաբերյալ Կետոնալ պրեպարատի համեմատ: Ցույց է տրվել, որ 25մգ Դեկսալգինի դոզան չի զիջում Կետոնալի 50մգ դոզային: Այն առավել ինտենսիվ է իջեցնում ցավը: «Actavis» և «Emcure» ֆիրմաների համագործակցության արդյունքում մշակվել է կալցիումի ինովացիոն անտոգոնիստը՝ ամլոդիպինի քիրալայնորեն մաքուր ձևը՝

(S)- ամլոդիպինը³ (նկար 15, (63):



Նկար 15

Այն ենթարկվել է կլինիկական փորձարկման 6700 կամավորների վրա ամբողջ աշխարհում: Այն արդյունավետ է և անվտանգ նույնիսկ կես դոզաչափի դեպքում՝ համեմատած սովորական ամլոդիպինի հետ: Ավելին, սովորական ամլոդիպինը առաջ է բերում ներքին վերջույթների այտուցում հիվանդների 16%-ի մոտ, այն դեպքում, երբ ЭсКорди Кор (S)-амлодипин պրեպարատի դեպքում այն < է 2%-ից^{3,4,117}: Արդյունքում, հիմա հիվանդները կարող են չանհանգստանալ սեփական կոշիկները հագնելու համար:

Եթե էնանտիոմերները օժտված են հակառակ էֆեկտներով, ապա անհմաստ է շարունակել օգտագործել նրանց ռացեմատ խառնուրդը, օրինակ՝ մետոպրոլոլը¹¹⁸: Եթե էնանտիոմերները գտնվում են ոչ ակտիվ կոմպոնենտների տեսքով, անհրաժեշտ է հաշվի առնել նրանց թողած ազդեցության մասին մետաբոլիկ համակարգի վրա և մետաբոլիզմի ֆերմենտների հետ նրանց փոխազդեցության վրա: Օրինակ (S)-մետոպրոլոլը կարելի է տալ ինչպես բարձր, այնպես էլ ցածր մետաբոլիզմ ունեցող հիվանդներին, առանց վախենալու, քանի որ (R)- իզոմերը չի կուտակվում¹¹⁸:

Վերը թվարկածներից բացի «Actavis» և «Emcure» ֆիրմաների մաքուր էնանտիոմերների հիման վրա պատրաստած դեղանյութերից են նաև (S)-էտոդոլակը¹¹⁹ (ցավազրկող), (S)-ցիտալոպրամ¹²⁰ (անտիդեպրեսանտ) և այլն:


2001թ-ից հետո առաջին պրեպարատը, որի բաժանված իզոմերների անվտանգությունը պարզաբանվել էր Պարկինսոնի հիվանդության բուժման ժամանակ, L-DOPA-ն էր: Այն այլ կերպ անվանում են նաև լևոդոպա (ձախ պտտող իզոմեր)¹²¹:

Որպես պոտենցիալ կարդիոպրոտեկտորներ քրոնիկ սրտային անբավարարվածության դեմ հետազոտվել են նաև L-կառուցվածքի պեպտիդային ածանցյալներ, մասնավորապես՝ ապելինը (2010թ), նեյրոպեպտիդ FF-նորգլիտոն^{122,123}, որն ընդունակ է շատ

արագ բարձրացնել արտերիալ ճնշումը, որը շատ հրատապ է մեծաքանակ արյունահոսության ժամանակ (Վ. Ի. Կապելկո 2010թ): Ուսումնասիրվում են հակաայտուցային հատկությամբ օժտված նոր պեպտիդներ, որոնք դեռևս կլինկական փորձարկումներ չեն անցել (Վ. Պ. Շիրինսկի 2010թ):

1.4. Քիրալային β-պաշարիչներ

Առավել շատ ֆարմակալոգիական հատկությունների հետազոտության տեսանկյունից ուսումնասիրված են ատենոլոլի և մետոպրոլոլի (*S*)- և (*R*)-էնանտիոմերները: Հաստատվել է, որ այդ կարդիոսելեկտիվ ազնոսների նպատակային թերապևտիկ էֆեկտները ապահովվում են նրանց (*S*)-էնանտիոմերների β-պաշարիչ ակտիվությամբ: Այդ նույն ժամանակ դրանց (*R*)-էնանտիոմերները պատասխանատու են այդ պրեպարատներին բնորոշ β₂-անտոգոնիզմի համար¹²⁴ (նկար 16, (64):



Նկար 16

L-աթենոլոլ

L-մետոպրոլոլ

Աթենոլոլ: Ունեցած հիդրոֆիլության հետևանքով լյարդում չենթարկվելով մետաբոլիզմի, թողնում է հակաադրենալերգետիկ ազդեցություն առանց փոփոխության և կուտակվում ու դուրս են բերվում օրգանիզմից բացառապես (*S*)-էնանտիոմերի հաշվին: Պակաս կարևոր չէ նաև այն, որ առանց փոփոխության օրգանիզմից հեռանում է միայն (*S*)-էնանտիոմերը, իսկ (*R*)-էնանտիոմերը կուտակվում է օրգանիզմում: Կատարված կլինիկական հետազոտությունները 250 հիվանդների վրա, որոնք ընդունել են (*S*)-աթենոլոլի 25մգ չափաբաժին (համարժեք ռացեմատի 50մգ չափաբաժնին) բացահայտել են հակահիպերտենզիվ հատկություն՝ առանց արյան ճարպային սպեկտրի վրա ազդելու¹²⁴:

Մետոպրոլոլ: Հաստատված է, որ մետոպրոլոլի (*S*)-էնանտիոմերը օժտված է բացառապես β-պաշարիչ հատկությամբ, այն դեպքում, երբ (*R*)-էնանտիոմերը β₂-պաշարիչ հատկություն ունի (նկար 16, (65): (*S*)-էնանտիոմերի աֆինությունը (խնամակ-

ցությունը) β : ռեցեպտորների հանդեպ 500 անգամ մեծ է (R)-էնանտիոմերի համեմատ¹²⁵: Սակայն մետոպրոլոլի լիպոֆիլությունը որոշ լրացուցիչ կլինիկական դժվարություններ է ստեղծում:

Քիրալային տեխնոլոգիաների զարգացումը նոր հորիզոններ է բացում ժամանակակից դեղագործական արդյունաբերության մեջ: Վերջին հաշվով, քիրալային տեխնոլոգիաների մշակողների ջանքերն ուղղված են առանձին էնանտիոմերների մոտ հավաստի բուժական էֆեկտների հաստատմանը և դրանց կլինիկական փորձարկումներից հետո նոր անվնաս և արդյունավետ դեղապրեպարատների ստացմանը: Դրանք լուրջ ռեսուրս կհանդիսանան քիրասելեկտիվային պրեպարատների առաջ մղմանը թերապևտիկ, այդ թվում նաև կարդեոլոգիայի բնագավառում:

Այսպիսով, դեղանյութերի ստերեոիզոմերների ներթափանցումը կիրառական բուժական պրակտիկա պայմանավորված է նրանց արդյունավետությամբ և թողած ցածր պարթոլոգիական դրսևորումներով:


1.5. α -ամինաթթուների ստեխիոմետրիկ ասիմետրիկ սինթեզի առավել հայտնի օրինակներ

Հայտնի են միջազգային հանրաճանաչ գիտական խմբեր, որոնց կողմից իրականացված հետազոտությունները լուրջ խթան հանդիսացան բնագավառի հետագա զարգացման համար: Առավել արժեքավոր Շոլկոֆի¹²⁶, Ջեքսիսի¹²⁷, Օպոլզների¹²⁸ և Յու. Բելոկոնի¹¹⁴ աշխատանքները: Մասնավորապես, Շոլկոֆի գիտական խմբի կողմից երկու ամինաթթուների դիկետոպիպերազիններից կազմված քիրալային բիս-լակտամային էսթերների C-ակլիլման ռեակցիաներով α -ամինաթթուների ասիմետրիկ սինթեզի մշակված մեթոդները անցած դարավերջի լավագույն նվաճումներից են համարվել: Այդ եղանակով (R)-բացարձակ կառուցվածքի α -տեղակալված- α -ամինաթթուների յուրօրինակ սինթեզի սխեմատիկ ընթացքը բերվում է սխեմա 6-ում:

Այդ սինթեզների յուրահատկությունը կայանում էր նրանում, որ արգասիք նպատակային ամինաթթուների բացարձակ կոնֆիգուրացիան ունենում էր օգտագործվող էլային քիրալային ռեագենտների հակադիր կոնֆիգուրացիան, այսինքն (R)- կոնֆիգուրացիայի քիրալային ռեագենտից ստացվում էր (S)- և ընդհակառակը՝ (S)-

ից (R)- ամինաթթուներ:


Մխենա 6



Դրանից հետո, այս մեթոդի կիրառմամբ, օգտագործելով (S)-Val-(S,R)-Ala-OCH₃ խառը բիս-լակտամային եթերը սինթեզվել են (R)- α -MePhe, (R)- α -MeDOPA, (R)- α -MeallylGly¹²⁹, (R)- α -MeSer¹³⁰, (R)- α -EtTrp¹³¹, (R)- α -iVal¹³² և այլ ամինաթթուների ստացման համար:

Հետազոտողների խումբը Օպոլզերի ղեկավարությամբ, գլիցինիլմինների ստերեոսելեկտիվ ալկիլմամբ իրականացրել են α -ամինաթթուների սինթեզ, որպես էլային քիրալային օժանդակ ռեագենտ օգտագործելով կամֆորասուլտամը (սխենա 7, R = SMe):

Մխենա 7




Մեթոդը հնարավորություն է ընձեռում, ալկիլման արգասիք կամֆորասուլտամի և

ամինաթթուների կոմպլեքսերի հիդրոլիզատներից անջատել նպատակային (S)-կառուցվածքի ամինաթթուները՝ $\leq 90\%$ ստերեոսելեկտիվությամբ¹³³⁻¹³⁵:

Իմանիշին և աշխատակիցները α, α -բիսակլիլամինաթթուների ստացման համար օգտագործել են α -ամինաթթուների էսթերների և պիրիդոքսալի քիրալային ածանցյալներից առաջացած ամիդների ստերեոսելեկտիվ ալկիլման եղանակը¹³⁶(սխեմա 8):

Հեղինակները պարզել են, որ ռեակցիայի ստերեոսելեկտիվությունը էապես կախված է պիրիդոքսալի քիրալային կողմնային շղթայի կառուցվածքից և օգտագործվող հիմքի մետաղի բնույթից: Մասնավորապես, նրանք ցույց են տվել, որ համեմատաբար բարձր արդյունքներ են ստացվել, երբ R^3 -ը նավթիլմեթիլ է, իսկ R^4 -ը մեթիլ, իսկ օգտագործվող հիմքը NaOH-ն է: Նման պայմաններում ալկիլման ռեակցիայի արգասիքները ստացվում են 86% ասիմետրիկ ելքով:

Սխեմա 8




Մի այլ աշխատանքում, Լուի Հոնգը օգտագործելով Ni^{II} –ի հարթ-քառակուսային գլիցինային կոմպլեքսները, շատ բարձր ստերեոսելեկտիվությամբ ($ee > 99\%$) սինթեզելով (S)- և (R)-2-ամինո-3,3-բիս-(4-ֆտորֆենիլ)պրոպիոնաթթուները¹³⁷:

Այդ կոմպլեքսները ըստ բենզիլպրոլինային խմբի մոդիֆիկացված տարբերակների տեսքով կիրառվել է այլ հետազոտական խմբերի՝ մասնավորապես Ա. Բլակի կողմից՝ նպատակ ունենալով մեծացնել սինթեզի դիաստերեոսելեկտիվությունը: (S)-2-N-(N'-բենզիլպրոլիլ)ամինոբենզոֆենոն քիրալային ռեագենտի բենզիլ խումբը փոխարինելով

դիֆենիլ մեթիլ, տրիտիլ և նավթալեն 1-իլ-մեթիլ խմբերով, արձանագրել է ստերեոսե-
լեկտիվության չնչին աճ, միայն նավթալեն 1-իլ-մեթիլ խմբերով կոմպլեքսների դեպ-
քում¹¹⁰:

Այնուհետև Սոլոշոնսկի և Էլլիսի կողմից սինթեզվել են Ni^{II} –ի նոր կառուցվածքի
գլիցինային կոմպլեքսներ և հետագոտել դրանք ակլիլհալոգենիդներով C-ակլիլման և
Միքայելի միացման ռեակցիաներում (սխեմա 9)¹³⁸: Ինչպես բերված, այնպես էլ մի շարք
այլ մեթոդներ¹³⁹⁻¹⁴³, որոնք նվիրված են ամինաթթուների ասիմետրիկ ստեխիոմետրիկ
սինթեզին, ընթանում են տարբեր կառուցվածքի օժանդակ քիրալային ռեագենտների
ամինաթթվային կոմպլեքսների օգտագործմամբ: Այդուհանդերձ, այդ մեթոդներից
տեխնոլոգիական մատչելիության տեսակետից α -ամինաթթուների ստեխիոմետրիկ
ասիմետրիկ սինթեզի համար արդյունավետ են ռեգեներացվող քիրալային
ռեագենտների կիրառմամբ մշակված կենսամիմետիկ մեթոդները, որոնց ժամանակ այդ
ռեագենտները ֆերմենտների նման վերականգնվում են քանակապես և ելային
քիրալային հատկությունների պահպանմամբ: Դա հնարավորություն է ընձեռում այդ
ռեագենտները բազմակի անգամ օգտագործել (*S*)- և (*R*)-բացարձակ կառուցվածքի α - և
 β -տեղակալված α -ամինաթթուների ասիմետրիկ բիոմիմետիկ սինթեզի
ռեակցիաներում:

Սխեմա 9



ԳԼՈՒԽ 2. ԽՆԴՐԻ ԴՐՎԱԾՔՆ ՈՒ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության բնագավառին նվիրված գրական ակնարկի վերլուծությունից հետևում է, որ բնական մետաբոլիտների սինթետիկ քիրալային նմանակների, այդ թվում և պրոպիոնաթթվի բենզոիլֆենիլ տեղակալված ածանցյալների համար, արդիական և հրատապ է համարվում ասիմետրիկ սինթեզի ուղղությունը, քանզի սուբստրատների օտարածին կառուցվածքների պատճառով դրանց ստացումը ավանդական մանրէաբանական և էնզիմատիկ մեթոդներով հնարավոր չէ:

Եվ պատահական չէ, որ էնանտիոմերապես մաքուր α -ամինաթթուների ստացման ասիմետրիկ սինթեզի մեթոդների հանդեպ աճող հետաքրքրությունն աշխարհում կապված է նաև դրանց կիրառական նշանակության հետ, որպես ժամանակակից հակաուռուցքային, ցավազրկող, ակոհոլային և թմրամոլության դեմ կիրառվող դեղապատրաստուկների բաղադրիչներ: Սկզբունքային նշանակություն են ձեռք բերել բժշկության, դեղագործության և այլ բնագավառներում լայնորեն կիրառվող α - և β -տեղակալված α -ամինաթթուները, մասնավորապես, β -բենզոիլֆենիլ տեղակալված α -ամինապրոպիոնաթթվի էնանտիոմերապես հարուստ ($ee > 95\%$) ածանցյալները, որոնք որպես ակտիվ ազիկոն մտնում են հայտնի ցավազրկող պրեպարատների բաղադրության մեջ:

Այդ պատճառով, վերջին տասնամյակների ընթացքում քիրալային տեխնոլոգիաների բուռն զարգացումը նոր հորիզոններ է բացում նաև դեղագործական արդյունաբերության համար: Դրանք լուրջ ռեսուրս կարող են հանդիսանալ քիրասելեկտիվային դեղապատրաստուկների առաջ մղմանը բժշկական թերապիայում:

Համաձայն գրական տվյալների, քիրալային տեխնոլոգիաների լավագույն ուղղություններից է ֆերմենտների մոդելային պարզ համակարգերի կիրառումը՝ կառուցված անցումային շարքի մետաղների քիրալային կոմպլեքսների վրա: Մասնավորապես, տեխնոլոգիական մատչելիության տեսակետից (S)- և (R)-բացարձակ կառուցվածքի ոչ սպիտակուցային ծագման α -ամինաթթուների պրեպարատիվ արտադրության համար լավագույն են համարվում պրոլին ամինաթթվի քիրալային կարբոնիլային N -(2-բենզոիլֆենիլ)-1-բենզիլպիրոլիդին-2-կարբօքսամիդ, N -(2-բենզոիլֆենիլ)-1-(3,4-դիքլոր-բենզիլպիրոլիդին)-2-կարբօքսամիդ, N -(2-բենզոիլֆենիլ)-1-(2-քլորբենզիլպիրոլիդին)-2-կարբօքսամիդ, N -(2-բենզոիլֆենիլ)-1-(2-ֆտորբենզիլպիրոլիդին)-2-կարբօքսամիդ,

ածանցյալների և գլիցին ու ալանին ամինաթթուների Շիֆի հիմքերից կառուցված Ni^{II} իոնի հարթ քառակուսային կոմպլեքսների հիման վրա մշակված մեթոդները:

Նշված մեթոդներն ունիվերսալ են, թույլ են տալիս սինթեզել զանազան կառուցվածքի թանկարժեք (1գ~150-350 ԱՄՆ դոլար) ոչ սպիտակուցային ամինաթթուներ, որոնք կիրառվում են բուժական թերապիայի և այլ բնագավառներում:

Հայտնի մեթոդների թերևս եզակի թերություն կարելի է համարել, ինչպես ելային ամինաթթվային, այնպես էլ ալկիլման արգասիք կոմպլեքսներում երբեմն ի հայտ եկող ուղեկից դիաստերեոմերների առկայությունը՝ պայմանավորված ատրոպոդիզոմերիայի երևույթով: Այն խանգարում է բարձր օպտիկական մաքրությամբ նպատակային ամինաթթվի ստացմանը անմիջապես սինթեզի փուլում: Հետևապես, օպտիկապես մաքուր ամինաթթու ստանալու նպատակով, հաճախ առաջացած դիաստերեոմերային կոմպլեքսների խառնուրդը ենթարկվում է քրոմատոգրաֆացման կամ վերաբյուրեղացման: Դա զգալիորեն ազդում է օպտիկապես մաքուր նպատակային արգասիքի վերջնական ելքերի և ստերեոսելեկտիվության վրա, ինչը հատկապես կարևոր է ՊԷՏ ախտորոշման մեջ նիշակիր ամինաթթուների կիրառության համար ($ee \geq 95\%$):

Հետևաբար ատրոպոդիզոմերիան բացառող, ամինաթթվային մնացորդների բարձր ռեակցիոնունակությամբ օժտված նոր մոդիֆիկացված ամինաթթվային կոմպլեքսների սինթեզն ու դրանց կիրառմամբ օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուների, ներառյալ β -բենզոիլֆենիլ տեղակալված ամինաթթուների բարձրսելեկտիվ մեթոդների մշակումը մնում է արդիական խնդիր:

Այդ նպատակով իրականացվել են հետևյալ ԳՀ աշխատանքները:

• Սինթեզվել են (*S*)-2-N-(N'-բենզիլպրոլիլ)ամինոբենզոֆենոնն [(*S*)-BPB] քիրալային օժանդակ ռեագենտի *N*-բենզիլպրոլինի մնացորդի ֆենիլային օղակի *o*-, *m*- և *p*- դիրքերում բրոմ տեղակալիչի պարունակությամբ մոդիֆիկացված նմանակներ՝ (*S*)- և (*R*)-N-(2-բենզոիլֆենիլ)-1-(2-բրոմբենզիլ)պիրոլիդին-2-կարբօքսամիդ (2-BrBPB), (*S*)- և (*R*)-N-(2-բենզոիլֆենիլ)-1-(3-բրոմբենզիլ)պիրոլիդին-2-կարբօքսամիդ (3-BrBPB), (*S*)- և (*R*)-N-(2-բենզոիլֆենիլ)-1-(4-բրոմբենզիլ)պիրոլիդին-2-կարբօքսամիդ (4-BrBPB) և դրանց ու ամինաթթուների Շիֆի հիմքերի հետ Ni^{II} իոնի առաջացրած հարթ քառակուսային կոմպլեքսներ:

- սինթեզված մոդիֆիկացված քիրալային կոմպլեքսները հետազոտվել են ալկիլհալոգենիդների հետ դրանց ամինաթթվային մնացորդների C-ալկիլման ասիմետրիկ ռեակցիաներում և մշակել (*S*)-և (*R*)-բացարձակ կառուցվածքի α -ամինաթթուների և դրանց α -մեթիլ տեղակալված նմանակների բարձրսելեկտիվ սինթեզի մեթոդներ:

- գլիցինի և ալանինի մոդիֆիկացված ամինաթթվային կոմպլեքսները հետազոտել արոիլֆենիլ_տեղակալիչ պարունակող ալկիլ հալոգենիդների հետ C-ալկիլման ռեակցիաներում, β -դիրքում օպտիկապես ակտիվ α -ամինապրոպիոնաթթվի նոր ածանցյալների բարձրսելեկտիվ ($ee > 95\%$) մեթոդների մշակման համար, որոնք որպես պոտենցիալ ցավազրկող հատկությամբ օժտված ոչ ստերեոիդային ազլիկոններ կարող են կիրառվել բժշկական թերապիայում:

- մոդիֆիկացված կոմպլեքսները հետազոտել են հետերոցիկլիկ խմբեր պարունակող ալկիլ հալոգենիդների հետ C-ալկիլման ռեակցիաներում և մշակել (*S*)-և (*R*)-բացարձակ կառուցվածքի, օպտիկապես ակտիվ α -ամինապրոպիոնաթթվի նոր ածանցյալների բարձրսելեկտիվ ($ee > 95\%$) մեթոդների մշակման համար:

Անշուշտ նման մեթոդների մշակումը խթան կհանդիսանա քիրալային նոր տեխնոլոգիաների մշակման համար և ռեսուրս կարող են հանդիսանալ քիրասելեկտիվային պրեպարատների առաջ մղմանը բժշկական թերապիայում:

ԳԼՈՒԽ 3. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

3.1. Բրոմ պարունակող մոդիֆիկացված քիրալային օժանդակ ռեագենտների և դրանց ամինաթթվային կոմպլեքսների սինթեզն ու կառուցվածքային հետազոտությունները

Ոչ սպիտակուցային ծագման α -ամինաթթուների ասիմետրիկ բիոմիմետիկ սինթեզին նվիրված գրականության մեջ նկարագրված առավել հայտնի աշխատանքների վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ տեխնոլոգիական մատչելիության տեսակետից (*S*)- և (*R*)-բացարձակ կառուցվածքի α -ամինաթթուների պրեպարատիվ արտադրության համար լավագույն են համարվում պրոլին ամինաթթվի քիրալային կարբոնիլային N-(2-բենզոիլֆենիլ)-1-բենզիլպիրոլիդին-2-կարբօքսամիդ, N-(2-բենզոիլֆենիլ)-1-(3,4-դիքլորբենզիլպիրոլիդին)-2-կարբօքսամիդ, N-(2-բենզոիլֆենիլ)-1-(2-քլորբենզիլպիրոլիդին)-2-կարբօքսամիդի, N-(2-բենզոիլֆենիլ)-1-(2-ֆտորբենզիլպիրոլիդին)-2-կարբօքսամիդի ածանցյալների և գլիցին ու ալանին ամինաթթուների Շիֆի հիմքերից կառուցված Ni^{II} իոնի հարթ քառակուսային կոմպլեքսների հիման վրա մշակված մեթոդները^{115,116,130, 143,144}:

Որպես պիրիդօքսալային ֆերմենտների պարզ մոդելային համակարգեր, այդ կոմպլեքսներն օժտված են դրանցում ամինաթթվային մնացորդների բարձր CH-թթվայնությամբ, բարձր էնանտիո- և դիաստերեոսելեկտիվությամբ, ինչն ապահովում է C-ակտիվման ասիմետրիկ ռեակցիաներ 88-97% ստերեոսելեկտիվությամբ, արդյունքում ապահովելով զանազան կառուցվածքի սպիտակուցային և ոչ սպիտակուցային ծագման (*S*)- և (*R*)- α -ամինաթթուների ստացումը^{145,146}:

Նշված մեթոդներն ունիվերսալ են, որը հնարավորություն է ընձեռում միննույն ելային քիրալային ռեագենտի (ելային հումքի) օգտագործմամբ, մատչելի և էժան բնական ամինաթթուներ գլիցինից և (*R,S*)-ալանինից (1կգ~10 ԱՄՆ դոլար) սինթեզել զանազան կառուցվածքի բուժական թերապիայի և այլ բնագավառներում կարևոր կիրառություն գտած թանկարժեք (1գ~150-350 ԱՄՆ դոլար) ոչ սպիտակուցային ամինաթթուներ:

Հատկանշական է, որ (*S*)-պրոլինից կազմված քիրալային օժանդակ ռեագենտի ամինաթթվային կոմպլեքսներից ստացվում են (*S*)-բացարձակ կոնֆիգուրացիայի

ամինաթթուներ, իսկ (R)-պրովինի ամինաթթվային կոմպլեքսները՝ ապահովում են (R)- α -ամինաթթուների սելեկտիվ սինթեզ:

Պետք է նաև ընդգծել, որ սինթեզից հետո օգտագործված քիրալային ռեագենները վերականգնվում են նախնական քիրաօպտիկ հատկությունների լրիվ պահպանմամբ, որը հնարավորություն է ստեղծում դրանք բազմակի անգամ կիրառել ամինաթթուների ասիմետրիկ սինթեզի նմանատիպ ռեակցիաներում¹⁴⁶:

Նշված մեթոդների եզակի թերություն կարելի է համարել, ինչպես էլային ամինաթթվային կոմպլեքսներում, այնպես էլ դրանց ակիլման արգասիք կոմպլեքսներում ի հայտ եկող ուղեկից դիաստերեոմերների առկայությունը, որը համաձայն այդ կոմպլեքսների ռենտգենկառուցվածքային հետազոտությունների պայմանավորված է աստրոպոիզոմերիայի երևույթով^{115,116}: Վերջինիս պատճառով նպատակային ամինաթթուները հնարավոր չէ ստանալ բարձր օպտիկական մաքրությամբ սինթեզի մեկ փուլով: Ուստի, օպտիկապես մաքուր ամինաթթու ստանալու նպատակով՝ առաջացած դիաստերեոմերային կոմպլեքսների խառնուրդը ենթարկվում է քրոմատոգրաֆացման կամ վերաբյուրեղացման: Վերջինս զգալիորեն ազդում է օպտիկապես մաքուր նպատակային արգասիքի վերջնական ելքերի և ստերեոսելեկտիվության վրա, ինչը հատկապես կարևոր է ՊԷՏ ախտորոշման մեջ նիշակրված ամինաթթուների օգտագործման ժամանակ:

Վերջին տասնամյակների ընթացքում քիրալային տեխնոլոգիաների բուռն զարգացումը նոր հորիզոններ է բացում դեղագործական արդյունաբերության մեջ: Դրանք լուրջ ռեսուրս կարող են հանդիսանալ քիրասելեկտիվային պրեպարատների առաջ մղմանը բժշկական թերապիայում: Սկզբունքային նշանակություն են ձեռք բերել բժշկության, դեղագործության և այլ բնագավառներում լայնորեն կիրառվող α - և β -տեղակալված α -ամինաթթուները¹⁴⁵⁻¹⁵⁰: Հեռանկարային են համարվում նաև β -բենզոհիլֆենիլ տեղակալված α -ամինապրոպիոնաթթվի էնանտիոմերապես հարուստ ($ee > 95\%$) ածանցյալները, որոնք ոչ ստերեոիդային պոտենցյալ ակտիվ ազդիկոններ կարող են հանդիսանալ ինչպես հայտնի, այնպես էլ նոր ստեղծվելիք ցավազրկող պրեպարատների համար^{146,149}: Նշված բոլոր բնագավառներում α -ամինաթթուները կիրառելի են միայն օպտիկապես մաքուր էնանտիոմերների տեսքով, քանի որ

հակառակ անտիպոդը սովորաբար թողնում է հակառակ ազդեցություն, իսկ ՊԷՏ ախտորոշման դեպքում՝ խանգարում է արդյունավետ ախտորոշմանը:

Հետևաբար, բարձր դիաստերեոմերային մաքրությամբ և բարձր ռեակցիոնունակությամբ օժտված նոր մոդիֆիկացված ամինաթթվային կոմպլեքսների սինթեզն^{143,144} ու դրանց կիրառմամբ օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուների¹⁴⁵⁻¹⁵³, մասնավորապես β -բենզիլֆենիլ տեղակալված α -ամինապրոպիոնաթթվի նոր և էնանտիոմերապես հարուստ ($ee > 95\%$) ածանցյալների բարձրսելեկտիվ քիրալային նոր տեխնոլոգիական մեթոդների մշակումը մնում է արդիական խնդիր:

Հիմք ընդունելով գրական ակնարկում ներկայացված հայտնի աշխատանքների վերլուծությունը, ատենախոսական աշխատանքի այս բաժնում սինթեզվել և հետազոտվել են (*S*)-2-N-(N`-բենզիլպրոլիլ)ամինաբենզոֆենոնի (BPB) քիրալային օժանդակ ռեագենտի նոր մոդիֆիկացված նմանակներ և դրանց ու ամինաթթուների Շիֆի հիմքերի հետ Ni^{II} իոնի կոմպլեքսները՝ N-բենզիլպրոլինի մնացորդի ֆենիլային օղակի *օրթո*-, *պարա*- և *մետա* դիրքերում առավել ծանր Br տեղակալիչի պարունակությամբ, որն ըստ տեսական պատկերացումների կբացառի ատրոպոդիզմների կոմպլեքսներում: Վերջիններս, որպես պիրիդոքսալ ֆերմենտների արդյունավետ նոր մոդելային համակարգեր, հետազոտվել են α -ամինաթթուների ասիմետրիկ կենսամիմետիկ սինթեզի ռեակցիաներում:


Բրոմ պարունակող քիրալային օժանդակ ռեագենտների սինթեզն իրականացվել է մեր կողմից նախկինում մշակված մեթոդով¹³⁰:

Առաջին փուլում, իզոպրոպանոլի միջավայրում, անջուր KOH-ի առկայությամբ 40°C-ում (*S*)-պրոլինը փոխազդեցության մեջ է դրվում մոնոբրոմտեղակալված բենզիլքլորիդների հետ՝ առաջացնելով համապատասխան բրոմտեղակալված N-բենզիլ-(*S*)-պրոլինի մոդիֆիկացված ածանցյալներ՝ (*S*)-N-(2-բրոմբենզիլ)պրոլին՝ (*S*)-2-BrBP (1), (*S*)-N-(3-բրոմբենզիլ)պրոլին՝ (*S*)-3-BrBP (2), (*S*)-N-(4-բրոմբենզիլ)պրոլին՝ (*S*)-4-BrBP (3):

Հաջորդ փուլում, մեթիլեն քլորիդի միջավայրում, մինչև 0°C սառեցման պայմաններում մոնոբրոմ տեղակալված բենզիլպրոլինները (1-3), PCl₅-ի ներկայությամբ և միջանկյալ քլորանհիդրիդների առաջացմամբ կոնդենսվում են 2-ամինաբենզոֆենոնի

հետ, առաջացնելով (S)-N-(2-բենզոիլֆենիլ)-1-(2-բրոմբենզիլ)պիրոլիդին-2-կարբօքսամիդ՝ [(S)-2-BrBPB, (4)], (S)-N-(2-բենզոիլֆենիլ)-1-(3-բրոմբենզիլ)պիրոլիդին-2-կարբօքսամիդ՝ [(S)-3-BrBPB, (5)], (S)-N-(2-բենզոիլֆենիլ)-1-(4-բրոմբենզիլ)պիրոլիդին-2-կարբօքսամիդ՝ [(S)-4-BrBPB, (6)] մոդիֆիկացված քիրալային օժանդակ ռեագենտները (սխեմա 1):

Սխեմա 1




Ինչպես արձանագրվել էր նախկինում, (S)-2-CBPB-ի սինթեզի օրինակի վրա, սույն աշխատանքում ևս, սինթեզված N-բենզիլպիրոլինի մնացորդում բրոմ պարունակող մոդիֆիկացված քիրալային օժանդակ ռեագենտների սինթեզի ռեակցիաներում, որպես լավագույն քլորանհիդրիդացող ագենտ է արձանագրվել PCl₅: Փորձական եղանակով պարզվել է, որ նման համակարգերում կոնդենսման ռեակցիաները համեմատաբար բարձր ելքերով են ընթանում CH₂Cl₂-ի միջավայրում 0°C-ի տակ PCl₅-ի էկվիմոլյար քանակների դանդաղ ավելացման պայմաններում: Ի տարբերություն նախկինում մշակված մեթոդի¹³⁰, սույն հետազոտության ընթացքում մոդիֆիկացված քիրալային օժանդակ ռեագենտների անջատման և մաքրման պրոցեսների հեշտացման և քիմիական ելքերի բարձրացման նպատակով, դրանք ռեակցիոն խառնուրդից անջատվել են հիդրոքլորիդների տեսքով: Դրա համար, ռեակցիոն խառնուրդից լուծիչը հեռացնելուց հետո, չոր մնացորդը մշակվում է 2N HCl-ով և նպատակային

արգասիքները վերաբյուրեղացվում են սցետոնից (*S*)-2-BrBPBxHCl (4), (*S*)-3-BrBPBxHCl (5) և (*S*)-4-BrBPBxHCl (6) տեսքով:

Հաջորդ փուլում, սինթեզված բրոմ պարունակող մոդիֆիկացված քիրալային օժանդակ ռեագենտները (4-6) օգտագործվել են հայտնի մեթոդով գլիցին և ալանին ամինաթթուների հետ Շիֆի հիմքով Ni^{II} իոնի առաջացրած հարթ քառակուսային կոմպլեքսների սինթեզի նպատակով: Փորձական եղանակով պարզվել է, որ *N*-բենզիլպրոլինի մնացորդի 2-րդ, 3-րդ և 4-րդ դիրքերում բրոմ տեղակալիչ պարունակող մոդիֆիկացված քիրալային օժանդակ ռեագենտները (4-6) անկախ ռեակցիայի պայմաններից (KOH/CH₃OH) (NaOH/CH₃OH), (KOH/C₂H₅OH), (NaOH/ C₂H₅OH, NaOH/CH₃ONa), հեշտությամբ մասնակցում են կոմպլեքսագոյացման ռեակցիաներին, առաջացնելով Ni^{II} իոնի և գլիցին ու ալանին ամինաթթուների շիֆային հիմքերի հարթ-քառակուսային կոմպլեքսներ՝ Ni^{II}-(*R*)-2-BrBPB-Gly (7), Ni^{II}-(*R*)-3-BrBPB-Gly (8), Ni^{II}-(*R*)-4-BrBPB-Gly (9), Ni^{II}-(*R*)-2-BrBPB-(*R*)-Ala (10), Ni^{II}-(*R*)-3-BrBPB-(*R*)-Ala (11), Ni^{II}-(*R*)-4-BrBPB-(*R*)-Ala (12) (սխեմա 2):

Սխեմա 2



R = 2-Br, R' = H; Ni^{II}-(*S*)-2-BrBPB-Gly (7), R = 3-Br, R' = H; Ni^{II}-(*S*)-3-BrBPB-Gly (8)
 R = 4-Br, R' = H; Ni^{II}-(*S*)-4-BrBPB-Gly (9), R = 2-Br, R' = CH₃, Ni^{II}-(*S*)-2-BrBPB-(*S*)-Ala (10),
 R = 3-Br, R' = CH₃, Ni^{II}-(*S*)-3-BrBPB-(*S*)-Ala (11), R = 4-Br, R' = CH₃,
 Ni^{II}-(*S*)-4-BrBPB-(*S*)-Ala (12)

Կոմպլեքսագոյացման ռեակցիայի ընթացքին հարմար է հետևել նրբաշերտային բրոմատոգրաֆիայի եղանակով SiO₂-ի թիթեղների վրա (Silufol) CHCl₃ : CH₃COCH₃ (5:1), ըստ ելային քիրալային ռեագենտների հետքերի անհետացման՝ (ՈւՄ) ճառագայթների լույսի տակ: Ստացված աղյուսակարմիր կոմպլեքսները չեն լուծվում ջրում և լավ

լուծվում են օրգանական լուծիչներում (ացետոն, քլորոֆորմ և այլն) ինչը հնարավորություն է ստեղծում նրանց քանակապես անջատել ռեակցիոն միջավայրից՝ ջրից նստեցմամբ: Ինչպես և սպասվում էր, աքիրալային գլիցինի կոմպլեքսագոյացման արդյունքում առաջանում է մեկ իզոմեր, իսկ քիրալային ամինաթթու պլանինի դեպքում՝ (*S,S*)- և (*S,R*) դիաստերեոմերների խառնուրդ՝ *R*-ի փոքր արժեքով (*S,S*)-դիաստերեոմերի բացարձակ մեծ ավելցուկով (99.05/0.5): Կոմպլեքսագոյացման արդյունքները բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Բրոմ պարունակող քիրալային օժանդակ ռեագենտների գլիցին ամինաթթվի հետ կոմպլեքսագոյացման արդյունքները $\text{CH}_3\text{OH}/\text{KOH}$ -միջավայրում 55-60 °C-ում


Քիրալային ռեագենտ	Ստացված Շիֆի հիմքով կոմպլեքս	Քիմիական ելք, %	(<i>S,S</i>) / (<i>S,R</i>)*, %
<i>(S)</i> -2-BrBPB (4)	$\text{Ni}^{\text{II}}\text{-(S)-2-BrBPB-Gly}$ (7)	87.2	-
	$\text{Ni}^{\text{II}}\text{-(S)-2-BrBPB-(S)-Ala}$ (10)	85.7	99.5 / 0.5
<i>(S)</i> -3-BrBPB (5)	$\text{Ni}^{\text{II}}\text{-(S)-3-BrBPB-Gly}$ (8)	78.4	-
	$\text{Ni}^{\text{II}}\text{-(S)-3-BrBPB-(S)-Ala}$ (11)	81.5	97.5 / 2.5
<i>(S)</i> -4-BrBPB (6)	$\text{Ni}^{\text{II}}\text{-(S)-4-BrBPB-Gly}$ (9)	74.3	-
	$\text{Ni}^{\text{II}}\text{-(S)-4-BrBPB-(S)-Ala}$ (12)	82.6	97.1 / 2.9
** (<i>S</i>)-2-FBPB	$\text{Ni}^{\text{II}}\text{-(S)-2-FBPB-(S)-Ala}$	89.7	98.5/1.5
** (<i>S</i>)-BPB	$\text{Ni}^{\text{II}}\text{-(S)-BPB-(S)-Ala}$	90.0	94/6

* Դիաստերեոմերների միջինացված հարաբերակցությունը ըստ ^1H ՄՄՌ տվյալների
 ** նախկինում սինթեզված հայտնի քիրալային ռեագենտներ և դրանց ամինաթթվային կոմպլեքսներ

Ինչպես և արձանագրվել էր նախկինում, այս դեպքում ևս փորձնականորեն ցույց է տրվել, որ կոմպլեքսագոյացման ռեակցիաների ժամանակ պրոլինի մնացորդի բացարձակ կոնֆիգուրացիան չի փոփոխվում: Կոմպլեքսները ռեակցիոն խառնուրդից անջատելուց հետո լրացուցիչ վերաբյուրեղացվել են ացետոնից և հետագոտել դրանց կառուցվածքն ու բացարձակ կոնֆիգուրացիան ֆիզիկաքիմիական անալիզի ժամանակակից մեթոդներով (տես փորձնական մաս): Այդ կոմպլեքսներին բնորոշ է լայն

կլանման սպեկտր 500-550 նմ ալիքի երկարության մարզում (d-d անցում), դիամագնետիկ են, ինչը հնարավորություն է տալիս դրանց կառուցվածքի պարզաբանման համար օգտագործել $^1\text{H-NMR}$ սպեկտրադիտման մեթոդը: Համաձայն MNR սպեկտրների, կոմպլեքսների դիաստերեոիզոմերային խառնուրդում (S,S)/(S,R) հարաբերությունը (կոմպլեքսագոյացման ռեակցիայի ստերեոսելեկտիվությունը) գերբարձր է $\text{Ni}^{\text{II}}-(S)-2\text{-BrBPB-(S)-Ala}$ կոմպլեքսի դեպքում (99.05/0.5): $^1\text{H NMR}$ սպեկտրադիտման եղանակով (S,S)/(S,R) հարաբերությունը որոշվել է դիաստերեոիզոմերների խառնուրդում (առանց քրոմատոգրաֆացման կամ բյուրեղացման), ըստ *N*-բենզիլպրոլինի մնացորդի մեթիլենային խմբի պրոտոնների ազդանշանների ինտեգրալների հարաբերության՝ 3.62- 3.90 p.p.m և 4.21-4.45 p.p.m մարզում¹⁴³:

Մինթեզված բրոմ պարունակող մոդիֆիկացված կոմպլեքսների (7-12) կառուցվածքն ու բացարձակ կոնֆիգուրացիան հետազոտվել և հաստատվել են ֆիզիկաքիմիական անալիզի մեթոդներով: Ալանինի հիմնական դիաստերեոիզոմերային (10-12) կոմպլեքսների տեսակարար օպտիկական պտույտի արժեքները ունեցել են դրական արժեքներ, ինչը վկայում է դրանց (S,S)-բացարձակ կառուցվածքի մասին: $\text{Ni}^{\text{II}}-(S)-2\text{-BrBPB-(S)-Ala}$ (10) կոմպլեքսի կառուցվածքը լրացուցիչ հաստատվել է ռենտգենկառուցվածքային անալիզի մեթոդով, որի մոլեկուլային կառուցվածքը բերված է նկար 1-ում:



Նկար 1. $\text{Ni}^{\text{II}}-(S)-2\text{-BrBPB-(S)-Ala}$ (10) կոմպլեքսի մոլեկուլյար կառուցվածքն ըստ ՌԿՄ-ի տվյալների

Ինչպես երևում է նկար 1-ից, Ni^{II}-(S)-2-BrBPB-(S)-Ala (**10**) կոմպլեքսի մոլեկուլյար բյուրեղացանցում, ի տարբերություն նախկինում սինթեզված 2-CBPB և 2-FBPB քիրալային օժանդակ ռեագենտների նմանատիպ կոմպլեքսների՝ բացակայում է երկրորդ ատրոպոիզոմերը՝ պայմանավորված բենզիլային խմբի պտույտով մետաղի կոորդինացիոն հարթության վերևում: Ենթադրվում է, որ այն պայմանավորված է ավելի ծավալուն և ծանր Br տեղակալիչի ներմուծմամբ N-բենզիլպրոլինային մնացորդի ֆենիլային օղակի *օրթո* դիրք, որի արդյունքում խիստ դանդաղեցնում է բենզիլային խմբի պտույտը մետաղի կոորդինացիոն հարթության վերևում:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, կարելի է սպասել նաև ստերեոսելեկտիվության աճ այդ կոմպլեքսի կիրառմամբ իրականացվելիք C-ալկիլման ասիմետրիկ սինթեզի ռեակցիաներում:

Հաջորդ փուլում սինթեզված (S)-2-BrBPB, (S)-3-BrBPB և (S)-4-BrBPB քիրալային օժանդակ ռեագենտների ամինաթթվային կոմպլեքսները (**7-12**) հետազոտվել են դրանցում ալկիլհալոգենիդներով ասիմետրիկ C-ալկիլման ռեակցիաներում:


3.2. Բրոմ պարունակող մոդիֆիկացված կոմպլեքսների հետազոտումը

C-ալկիլման ռեակցիաներում

Այս բաժնում բրոմ պարունակող մոդիֆիկացված ամինաթթվային կոմպլեքսները (**7-12**), որպես ՊՖ ֆերմենտների պարզ մոդելային համակարգեր, հետազոտվել են դրանցում ամինաթթվային մնացորդների C-ալկիլման ռեակցիաներում: Ալկիլումն առավել արդյունավետ է ընթանում դիմեթիլֆորմամիդի միջավայրում, թարմ մանրացված, պինդ NaOH-ի առկայությամբ: Ալկիլման ռեակցիաների ընթացքին հարմար է հետևել ՆՇՔ մեթոդով [SiO₂:CHCl₃:CH₃COOC₂H₅ (1:3)], ըստ ելային գլիցինի և ալանինի կոմպլեքսների հետքերի անհետացման և ալկիլված արգասիք կոմպլեքսների դիաստերեոիզոմերների միջև թերմոդինամիկական հավասարակշռության հաստատման: Գլիցինի կոմպլեքսների ալկիլման արդյունքում առաջանում են նոր ինդուցված քիրալային կենտրոնի տարբեր կոնֆիգուրացիաներով (S,S)- և (S,R)- դիաստերեոմեր կոմպլեքսների խառնուրդ՝ (S)-ամինաթթու պարունակող (S,S)- դիաստերեոիզոմերի բարձր ավելցուկով (de > 95%)¹⁴⁴:

Մխենա 3-ում ներկայացված է գլիցինի կոմպլեքսների (**7-9**) C-ալկիլման ռեակցիաները:

Միսնա 3



Որտեղ $\text{R} = \text{C}_6\text{H}_5\text{CH}_2\text{-}$, $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-2-BrBPB-}(S)\text{-Phe (13)}$, $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-3-BrBPB-}(S)\text{-Phe (14)}$, $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-4-BrBPB-}(S)\text{-Phe (15)}$ և $(S)\text{-Phe (28)}$,

$\text{R} = \text{2-F-C}_6\text{H}_4\text{CH}_2\text{-}$, $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-2-BrBPB-}(S)\text{-2-F-Phe (16)}$, $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-3-BrBPB-}(S)\text{-2-F-Phe (17)}$, $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-4-BrBPB-}(S)\text{-2-F-Phe (18)}$ և $(S)\text{-2-F-Phe (29)}$,

$\text{R} = \text{3-F-C}_6\text{H}_4\text{CH}_2\text{-}$, $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-2-BrBPB-}(S)\text{-3-F-Phe (19)}$, $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-3-BrBPB-}(S)\text{-3-F-Phe (20)}$, $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-4-BrBPB-}(S)\text{-3-F-Phe (21)}$ և $(S)\text{-3-F-Phe (30)}$

$\text{R} = \text{CH}_2=\text{CH-CH}_2\text{-}$, $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-2-BrBPB-}(S)\text{-}\alpha\text{-allyl-Gly (22)}$, $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-3-BrBPB-}(S)\text{-}\alpha\text{-allyl-Gly (23)}$, $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-4-BrBPB-}(S)\text{-}\alpha\text{-allyl-Gly (24)}$ և $(S)\text{-AllylGly (31)}$,

$\text{R} = \text{3,4-Cl}_2\text{-C}_6\text{H}_3\text{CH}_2\text{-}$, $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-2-BrBPB-}(S)\text{-3,4-Cl}_2\text{-Phe (25)}$, $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-3-BrBPB-}(S)\text{-3,4-Cl}_2\text{-Phe (26)}$, $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-4-BrBPB-}(S)\text{-3,4-Cl}_2\text{-Phe (27)}$ և $(S)\text{-3,4-Cl}_2\text{-Phe (32)}$,

Ալկիլման ռեակցիաների ստերեոսելեկտիվությունը (*ee*) գնահատվել է քիրալային ԲԱՀՔ անալիզի մեթոդով՝ (S,S) - և (S,R) -դիաստերեոմեր կոմպլեքսների խառնուրդի աղաթվային քայքայման և առաջացած հիդրոլիզատի իոնափոխանակային աղազրկման արդյունքում առաջացած ամինաթթուների էնանտիոմերային մաքրության

որոշմամբ: Բացի դրանից, ալկիլման ռեակցիաների ստերեոսելեկտիվությունը որոշվել է նաև առաջացած դիաստերեոմեր կոմպլեքսների խառնուրդի ¹H ՄՄՌ սպեկտրադիտման անալիզի մեթոդով՝ N-բենզիլպրոլինի մնացորդի բենզիլային խմբի մեթիլենային պրոտոնների ազդանշանների ինտեգրալների հարաբերությամբ՝ 2.55-4.40 p.p.m. մարզում: Հետազոտությունները ցույց են տվել, որ ալկիլման ռեակցիաները առավել բարձր դիաստերեոսելեկտիվությամբ են ընթանում Ni^{II}-(S)-2-BrBPB-Gly կոմպլեքսի կիրառմամբ, ԴՄՖ-ի միջավայրում ալկիլող ռեագենտի և հիմքի համարժեք քանակության պայմաններում (ալկիլող ազենտ/հիմք = 1/1)¹⁴⁴: Հետևաբար կարելի է ենթադրել, որ մոդիֆիկացված Ni^{II}-(S)-2-BrBPB-Gly քիրալային կոմպլեքսի դեպքում (ինչպես դա ապացուցվել էր նախկինում Cl, F պարունակող նմանատիպ կոմպլեքսների հետազոտության արդյունքում) ալկիլման ռեակցիաների համեմատաբար արագ ընթացքը պայմանավորված է դրանցում առկա բարձր թերմոդինամիկական և էնանտիոսելեկտիվային գործոններով: Արդյունքները բերված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Գլիցինի բրոմ պարունակող մոդիֆիկացված կոմպլեքսների C-ալկիլման արդյունքները ԴՄՖ-ում, ալկիլող ազենտ/NaOH = 1/1, t =25°C-ում

№	Գլիցինի կոմպլեքս	Ալկիլող ազենտ	Ժամ. րոպե	Ալկիլված կոմպլեքս	(S,S)/(S,R) (%), ^w	Ելքը (%), ^p
1	Ni ^{II} -(S)-2-BrBPB-Gly (7)	C ₆ H ₅ CH ₂ Br	26-28	13	98.0/2.0	80.0
2	-“-	2-F- C ₆ H ₄ CH ₂ Br	25-27	16	97.8/2.2	76.2
3	-“-	3-F- C ₆ H ₄ CH ₂ Br	20-22	19	97.6/2.4	81.5
4	-“-	CH ₂ =CH-CH ₂ -Br	25	22	96.6/3.4	75.0
5	-“-	3,4-Cl-C ₆ H ₃ CH ₂ Br	15-20	25	96.7/3.3	82.3
6	Ni ^{II} -(S)-3-BrBPB-Gly (8)	C ₆ H ₅ CH ₂ Br	45-48	14	97.3/2.7	68.1
7	-“-	2-F- C ₆ H ₄ CH ₂ Br	44-46	17	96.6/3.4	62.6

8	- “ -	3-F- C ₆ H ₄ CH ₂ Br	40-42	20	97.4/3.6	65.8
9	- “ -	CH ₂ =CH-CH ₂ -Br	40-44	23	96.3/3.6	65.0
10	- “ -	3,4-Cl-C ₆ H ₃ CH ₂ Br	43-49	26	95.7/4.3	61.3
11	Ni ^{II} -(S)-4-BrBPB-Gly (9)	C ₆ H ₅ CH ₂ Br	50-53	15	96.0/4.0	61.0
12	- “ -	2-F- C ₆ H ₄ CH ₂ Br	45-47	18	96.6/3.2	58.6
13	- “ -	3-F- C ₆ H ₄ CH ₂ Br	44-46	21	97.0/3.0	62.4
14	- “ -	CH ₂ =CH-CH ₂ -Br	45-49	24	96.6/3.4	75.0
15	- “ -	3,4-Cl-C ₆ H ₃ CH ₂ Br	52-53	27	96.7/3.3	72.9


ա) Քիրալային ԲԱՀՔ անալիզի տվյալներ; բ) Քիմիական ելքը ալկիլման փուլում

Նման եղանակով իրականացվել են նաև ալանինի բրոմ պարունակող մոդիֆիկացված կոմպլեքսների (10-12) ամինաթթվային մնացորդների C-ալկիլման ասիմետրիկ ռեակցիաները՝ α-տեղակալված α-ամինաթթուների առաջացմամբ^{144,150,153}:

Ալկիլման ռեակցիաները հետազոտվել են ԴՄՖ/ΚΟΗ, ԴՄՖ/NaOH միջավայրերում, ինչպես սենյակային ջերմաստիճանում, այնպես էլ մինչև 40-45 °C տաքացման պայմաններում: Լավագույն արդյունքներ են արձանագրվել ռեակցիաները ԴՄՖ/NaOH միջավայրում, մինչև 45-50 °C տաքացման պայմաններում իրականացնելիս: Ալկիլման ռեակցիաների ընթացքին հետևել ենք ՆՇՔ մեթոդով [SiO₂,CHCl₃:CH₃COCH₃ (5:1)], ըստ ելային ալանինի կոմպլեքսների հետքերի անհետացման կամ ալկիլման արգասիք (S,S)- և (S,R)-դիաստերեոմեր կոմպլեքսների միջև հավասարակշռության հաստատման: Քանի որ ալանինի կոմպլեքսի դեպքում միջանկյալ աքիրալային հարթ կարբանիոնի առաջացումը, հետևաբար նաև (S,S)- և (S,R)-դիաստերեոիզոմերների տրանսֆորմացումը մեկը մյուսին բացառված է, ուստի դրանց ամինաթթվային մնացորդի ալկիլման ռեակցիաների ստերեոսելեկտիվությունը հսկվում է միայն կինետիկական գործոններով: Ալկիլման արգասիքների հիմնական դիաստերեոիզոմեր կոմպլեքսները (33-47) առանձնացվել են խառնուրդից քրոմատոգրաֆացմամբ [SiO₂, CHCl₃:CH₃COCH₃ (1:2)] և հետազոտվել դրանց կառուցվածքն ու բացարձակ կոնֆիգուրացիան ֆիզիկաքիմիական անալիզի ժամանակակից մեթոդներով: Ալանինի բրոմտեղակալված մոդիֆիկացված

կոմպլեքսների (**10-12**) սկիզբնական ռեակցիաների արգասիք (*S,S*)- և (*S,R*)-դիաստերեոիզոմերների հարաբերությունը որոշվել է քիրալային ԲԱՀՔ անալիզի մեթոդով՝ (*S,S*)- և (*S,R*)-դիաստերեոիզոմերների խառնուրդի աղաթթվային քայքայման և առաջացած հիդրոլիզատի խոնափոխանակային աղազրկման արդյունքում առաջացած ամինաթթուների էնանտիոմերային մաքրության որոշմամբ: Ալկիլման ռեակցիաների ընթացքը բերված է սխեմա 4-ում:

Սխեմա 4



Որտեղ՝ $\text{R} = \text{C}_6\text{H}_5\text{CH}_2\text{-}, \text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-}2\text{-BrBPB-}(S)\text{-}\alpha\text{-MePhe}$ (**33**), $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-}3\text{-BrBPB-}(S)\text{-}\alpha\text{-MePhe}$ (**34**), $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-}4\text{-BrBPB-}(S)\text{-}\alpha\text{-MePhe}$ (**35**) և (*S*)- $\alpha\text{-MePhe}$ (**48**);

$\text{R} = 2\text{-F-C}_6\text{H}_4\text{CH}_2\text{-}, \text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-}2\text{-BrBPB-}(S)\text{-}\alpha\text{-Me-}2\text{-FPhe}$ (**36**), $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-}3\text{-BrBPB-}(S)\text{-}\alpha\text{-Me-}2\text{-FPhe}$ (**37**), $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-}4\text{-BrBPB-}(S)\text{-}\alpha\text{-Me-}2\text{-FPhe}$ (**38**) և (*S*)- $\alpha\text{-Me-}2\text{-FPhe}$ (**49**);

$\text{R} = 3\text{-F-C}_6\text{H}_4\text{CH}_2\text{-}, \text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-}2\text{-BrBPB-}(S)\text{-}\alpha\text{-Me-}3\text{-FPhe}$ (**39**), $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-}3\text{-BrBPB-}(S)\text{-}\alpha\text{-Me-}3\text{-FPhe}$ (**40**), $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-}4\text{-BrBPB-}(S)\text{-}\alpha\text{-Me-}3\text{-FPhe}$ (**41**) և (*S*)- $\alpha\text{-Me-}3\text{-FPhe}$ (**50**);

$\text{R} = \text{CH}_2=\text{CH-CH}_2\text{-}, \text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-}2\text{-BrBPB-}(S)\text{-}\alpha\text{-allyl-Ala}$ (**42**), $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-}3\text{-BrBPB-}(S)\text{-}\alpha\text{-allyl-Ala}$ (**43**), $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-}4\text{-BrBPB-}(S)\text{-}\alpha\text{-allyl-Ala}$ (**44**) և (*S*)- $\alpha\text{-allyl-Ala}$ (**51**);

$\text{R} = 3,4\text{-Cl}_2\text{-C}_6\text{H}_3\text{CH}_2\text{-}, \text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-}2\text{-BrBPB-}(S)\text{-}\alpha\text{-Me-}3,4\text{-Cl}_2\text{Phe}$ (**45**), $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-}3\text{-BrBPB-}(S)\text{-}\alpha\text{-Me-}3,4\text{-Cl}_2\text{Phe}$ (**46**), $\text{Ni}^{\text{II}}\text{-}(S)\text{-}4\text{-BrBPB-}(S)\text{-}\alpha\text{-Me-}3,4\text{-Cl}_2\text{Phe}$ (**47**) և (*S*)- $\alpha\text{-Me-}3,4\text{-Cl}_2\text{Phe}$ (**48**);

Cl₂Phe (52):

Բացի դրանից, ալկիլման ռեակցիաների ստերեոսելեկտիվությունը որոշվել է նաև առաջացած դիաստերեոմեր կոմպլեքսների խառնուրդի ¹H ՄՄՌ սպեկտրադիտման անալիզի մեթոդով՝ N-բենզիլպրոլինի մնացորդի բենզիլային խմբի մեթիլենային պրոտոնների ազդանշանների ինտեգրալների հարաբերությամբ՝ 2.55-4.40 p.p.m. մարզում: Արդյունքները բերված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Ni^{II}-(S)-2-BrBPB-(S)-Ala, Ni^{II}-(S)-3-BrBPB-(S)-Ala և Ni^{II}-(S)-4-BrBPB-(S)-Ala

կոմպլեքսների C-ալկիլման արդյունքները ԴՄՖ-ում, ալկիլող ազենտ/NaOH = 3/1, t = 55-60 °C

№	Ալանինի կոմպլեքս	Ալկիլող ազենտ	Ժամ. րոպե	Ալկիլված կոմպլեքս	(S,S)/(S,R) (%) , ^{ա)}	Ելքը (%) , ^{բ)}
1	Ni ^{II} -(S)-2-BrBPB-(S)-Ala (10)	C ₆ H ₅ CH ₂ Br	225	33	97.5/3.6	52.2
2	-“-	2-F-C ₆ H ₄ CH ₂ Br	230	36	97.1/3.9	59.8
3	-“-	3-F-C ₆ H ₄ CH ₂ Br	230	39	96.3/3.7	64.0
4	-“-	CH ₂ =CH-CH ₂ -Br	260	42	97.7/2.3	49.3
5	-“-	3,4-Cl-C ₆ H ₃ CH ₂ Br	240	45	94.7/5.3	60.4
6	Ni ^{II} -(S)-3-BrBPB-(S)-Ala (11)	C ₆ H ₅ CH ₂ Br	480	34	91.5/8.5	41.2
7	-“-	2-F-C ₆ H ₄ CH ₂ Br	500	37	92.6/7.4	56.3
8	-“-	3-F-C ₆ H ₄ CH ₂ Br	420	40	92.3/7.7	60.0
9	-“-	CH ₂ =CH-CH ₂ -Br	540	43	94.7/5.3	45.2
10	-“-	3,4-Cl-C ₆ H ₃ CH ₂ Br	600	46	93.5/7.5	59.1
11	Ni ^{II} -(S)-4-BrBPB-(S)-Ala (12)	C ₆ H ₅ CH ₂ Br	660	35	95.0/5.0	54.2
12	-“-	2-F-C ₆ H ₄ CH ₂ Br	630	38	91.1/8.9	59.2
13	-“-	3-F-C ₆ H ₄ CH ₂ Br	710	41	91.3/8.7	63.0

14	-“-	$\text{CH}_2=\text{CH}-\text{CH}_2-\text{Br}$	575	44	93.4/6.6	49.1
15	-“-	$3,4-\text{Cl}-\text{C}_6\text{H}_3\text{CH}_2\text{Br}$	860	47	93.7/7.3	60.4

ա) Քիրալային FԱՀՔ անալիզի տվյալներ; բ) Քիմիական ելքը ակտիվման փուլում

Ալկիլման ռեակցիաների ստերեոսելեկտիվության նվազումն ու C-ալկիլման ռեակցիաների տևողության մեծացումը հավանաբար պայմանավորված է բրոմ պարունակող կոմպլեքսներում ինչպես CH-թթվայնության նվազմամբ, այնպես էլ տարածական գործոններով:

Ամփոփելով բրոմ պարունակող նոր մոդիֆիկացված քիրալային օժանդակ ռեագենտների [(S)-2-BrBPB, (S)-3-BrBPB, (S)-4-BrBPB] և ամինաթթուների հետ Շիֆի հիմքով Ni^{2+} իոնի առաջացրած կոմպլեքսների C-ալկիլման արդյունքները, կարող ենք պնդել, որ ինչպես ռեակցիաների ստերեոսելեկտիվության ($ee = 92-95\%$), այնպես էլ դրանց տևողության տեսանկյունից ($\tau=35-75$ ր), դրանք զգալիորեն զիջում են նախկինում սինթեզված Cl, F տեղակալիչներ պարունակող նմանատիպ կոմպլեքսների տվյալներին ($ee > 98\%$, $\tau = 3-25$ ր) և ելնելով աղյուսակ 2 և 3-ում բերված տվյալներից, միայն (S)-2-BrBPB քիրալային օժանդակ ռեագենտի ամինաթթվային կոմպլեքսները կարելի է երաշխավորել ոչ սպիտակուցային ամինաթթուների պրեպարատիվ քանակներով ասիմետրիկ սինթեզի համար:

Ընդհանրացնելով մոնոհալոգեն տեղակալված մոդիֆիկացված քիրալային օժանդակ ռեագենտների հետ Ni^{II} իոնի առաջացրած հարթ քառակուսային կոմպլեքսներում ամինաթթվային մնացորդների C-ալկիլման ռեակցիաների արդյունքները, ակնհայտ է դառնում, որ քիրալային ռեագենտի N-բենզիլպրոլինի մնացորդի ֆենիլային օղակ էլեկտրոակցեպտոր (Cl, F, Br) տեղակալիչների ներմուծումը, հատկապես ֆենիլային օղակի *օրթո* դիրքում, առավելագույնս է խթանում ասիմետրիկ ռեակցիաների ընթացքը: Եվ օրինաչափ է, որ ալկիլման ռեակցիաների ժամանակ առավել բարձր արդյունքներ են արձանագրվել (S)-2-BrBPB օժանդակ ռեագենտի ամինաթթվային կոմպլեքսների դեպքում: Ուստի կարող ենք պնդել, որ հալոգեն տեղակալիչ պարունակող մոդիֆիկացված քիրալային ամինաթթվային կոմպլեքսների ստերեոսելեկտիվային հատկություններն ու դրանց արդյունավետությունը զգալիորեն

կախված են հալոգեն տեղակալիչի էլեկտրաբացասականությունից և տեղակալման դիրքից և նվազում են հետևյալ շարքով. (S)-2-FBPB>(S)-2-CBPB>(S)-2-BrBPB:


3.3. Բրոմ պարունակող մոդիֆիկացված կոմպլեքսների հետազոտումը β-բենզոիլֆենիլ տեղակալիչ պարունակող α-ամինապրոպիոնաթթվի նոր ածանցյալների սինթեզի ռեակցիաներում

Հետազոտության այս փուլը նվիրված է բժշկական պրակտիկայում լայնորեն կիրառվող β-բենզոիլֆենիլ տեղակալիչ պարունակող պրոպիոնաթթվի α-ամինապրոպիոնաթթվային էնանտիոմերապես հարուստ (ee > 95%) նոր ածանցյալների սինթեզին, նպատակ ունենալով ստանալ պոտենցիալ ցավազրկող հատկություններով օժտված ազդեցիկներ, որոնք հետագայում *in vitro* և *in vivo* փորձարկումներից հետո կարող են կիրառվել ինչպես արդեն կիրառվող, այնպես էլ նոր ստեղծվելիք անալգետիկների բաղադրության մեջ:

